

ԼԻԼԻԹ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ

Ի Մ Ա Շ ՈՒ Ն Ը

*«Մարդու ամենամեծ արժանիքը
նրան կասեցնելու անհնարինությունն է»:
Վիլյամ Սարոյան*

Շատ տարիներ առաջ էր. հրատարակչության փոքր ու անշուք սենյակում տեսա գրուցող երեք տղաների, որոնց հետ էլ՝ նրան: Ընդամենը մեկ օր առաջ էր, որ դեկանատում, ուսանողական տոմսերը տեղափոխելիս՝ թափվեցին, մեկը բացվեց, երևաց գեղեցկադեմ տղայի նկարը: Կռացա, վերցրեցի, երկար նայեցի...

Տղաները հրավիրեցին իրենց հետ սուրճ խմելու, ծանոթացանք: Նա դեռ ուսանող էր, բանաստեղծություններ էր գրում: Բարձրահասակ էր, մի քիչ թափթրված, շատ գեղեցիկ, հախուռն, անհանգիստ... Հետո մենք սկսեցինք հանդիպել: Շուտով հասկացանք, որ սիրահարված ենք անհույս... Ու հակառակվելով մեզ շրջապատող խայտաբղետ աշխարհին՝ որոշեցինք չբաժանվել: Ամուսնացանք: Հետո այդ սիրուց /թե՞ սիրահարվածությունից/ մեր աղջիկը ծնվեց: Հետո մենք բաժանվեցինք՝ էլ երբեք չմիանալու պայմանով:

Այդ ամենից մնաց դառը հիշողություն, ծանր ու անչափելի ապրումներ, արցունքներով ողողված գիշերներ, այլևս չլցվող դատարկություն ու... մի հրաշք աղջիկ:

Տարիներն արագ անցան: Ցավը չանցավ: Ցավն առհասարակ չի անցնում, պարզապես մենք այն թաքցնում ենք մեր մեջ, խորը-խորը ինչ-որ տեղ, ու թվում է, թե անցել է, բայց բավական է փոքր առիթ, որ դարձյալ դուրս ցցվի, էլի ցավեցնի՝ դառը-դառը, ոնց տարիներ առաջ:

Հիմա լույսը կանջատեն, քնաբեր կուլ կտան ու կքնեն, և երևի հին ցավերն էլ կգնան-կտեղավորվեն իրենց տեղերում...

Օրը սկսվեց ամեն օրվա նման. աղջիկս շտապում էր դասի, ես՝ աշխատանքի: Արագ-արագ պտտվում էինք տանը, ոտքի վրա ուտում, հագնվում: Խոսեցի սանրվածքի վրա, նեղվեց ու դուրս եկավ: Հայելու առաջ երկար սանրվում էի: Օրվա երկրորդ կեսին գործնական հանդիպում ունեի ակադեմիայի մի աշխատակցի հետ՝ հավանաբար մի քանի ամիս ձգվող համատեղ աշխատանքի համար: Եթե փորձեն հիշել, թե ինչն է իմ կյանքում

շատ եղել, կասեմ՝ համատեղ սովորող, աշխատող տղամարդիկ: Իրոք որ, ո՞նց եմ հաջողացրել մենակ մնալ:

Հայելու մեջ ես ինձ դուր եմ գալիս ու, թերևս առաջին անգամ կյանքում, ուզում եմ դուր գալ...

Հիմնարկում նույն տաղտուկն էր. ժամերը դանդաղ էին անցնում: Երբ եղգարը եկավ /պարզվեց՝ այդպես էր նոր գործընկերոջս անունը/, ես բավական հոգնած էի: Նա բարձրահասակ էր, 45-ի մոտ, արտահայտիչ աչքերով, որոնք խոսելիս պարտադիր կկոցում էր ու երևի դրանից՝ շատ լուրջ տեսք ստանում: Մենք երկար զրուցեցինք, աշխատանքի ընդհանուր կառուցվածքն ու ձևը որոշեցինք և, աշխատելու համար հանդիպելու օրերը ճշտելուց հետո, բաժանվեցինք:

Տանը աղջիկս թթված էր և ինչպես շատ հաճախ՝ անհաղորդ, խոսում էի միայն ես: Ընդհանրապես չեմ հասկանում, թե նա ո՞նց է նման, քչախոս, զուսպ, կոկետ, պահանջկոտ...

Իսկ այսօր ավելի նյարդային էր:

-Սիրահարված ես,- փորձեցի կատակել:

Ֆշշացրեց ու առանձնացավ: «Սիրահարվի՛ կրակն եմ ընկնելու», - մտածեցի ու որոշեցի հանգիստ թողնել: Գործերս ավարտեցի լուռումուռ, ապա նստեցի հեռուստացույցի առաջ ու սովորության համաձայն սկսեցի ալիքները փոխել: Մեկը մեկից անկապ դեմքեր, տգեղ, տգետ, ջարդված լեզու, անգրագետ խոսվածք: Բերում եմ մի գռեհիկ դեմք նստեցնում ու սկսում հարցեր տալ. այդպես երկու ժամ: Մի հարցնող լինի՝ ու՞մ է պետք նրա կարծիքը, երբ արածն ու չարածն էլ գիտես, նրա անկապ կուսակցության էությունն էլ գիտես, ոտքից գլուխ անբովանդակ դատողություններից հոգնել ես... Առհասարակ իրենց՝ այս երկրի անհասկանալի ու ծիծաղելի քաղաքականության գիտակ ձևակերպող մեր այրերն ուղղակի անտանելի են. ե՞րբ եմ նրանք հասկանալու, որ հիմնավորապես զգվեցրել եմ, որ իրենց այլևս լսող ու հավատացող չկա, որ վաղուց արդեն ժամանակն է գոնե լռելու, քանի որ դարձյալ վաղուց պարզ է, որ ուրիշ ոչ մի բանի ի վիճակի չեն: Ինչի ի վիճակի եմ՝ արդեն արել եմ: Լավ, ասենք իրենք իրենց ողորմելիությունը չեն տեսնում. բայց դրանք ընտանիք, հարազատ, բարեկամ չունեն՞ն, որ հասկացնեն:

Գիշերը նորից ցավը մեջս գլուխ բարձրացրեց. կոկորդս սեղմեց... Տարիները ո՞նց անցան՝ չհասկացա. օրվա տեմպին ենթակա, օրվա թելադրածին կամակատար ու անընդհատ երազելով՝ թե դեռ սիրելու ես, դեռ վայելելու ես... Իսկ օրերը չեն սպասում. վազում են: Ու մեջդ աննկատ

խմորվում է դժգոհությունը, անվերջ պատվում, պատվելու ընթացքում մեծանում... վե՞րջը: Վերջը էն, որ դժգոհությունը դառնում է տեր-տիրական ու ծնում տխրություն: Սա էլ արդեն ուրիշ պատմություն է. սպասումից, դժգոհությունից ու հոգնությունից ծնված այդ վիճակն ուղղակի ծերացնում է: Եվ այսպես մի տարի, երկու տարի, տասնհինգ տարի ու գնաց... Քեզ հարմարեցրած շաբաթվա օրերին, կուտակած դժգոհությունն արանք-արանք դուրս թափելով ու տխրությունդ շալակած՝ ապրում ես: Երբեմն շատ են զարմանում, թե որտեղի՞ց այն կենսախնդությունն իմ մեջ, որ զարթնում է առավոտյան՝ արևի լույսի հետ...

Օրը սկսվեց տնօրենի մոտ մտնելով: Նայում են նրա ոչինչ չասող դեմքին ու մտածում՝ գուցե նախապայմանե՞ր կան տնօրեն դառնալու համար: Ինչ-որ բան քթի տակ մրթմրթաց, որ նշանակում էր տեքստերիս հավանություն է տալիս, կարող եմ շարունակել: Մենք մի քանի բառ էլ մի կերպ փոխանակեցինք, ու ես դուրս եկա: Հետաքրքիր է, թե ի՞նչ կլիներ, երբ մարդիկ իրար մտքերը կարդային... ի՞նչ պիտի լիներ, երևի՝ խայտառակություն:

Ընդմիջմանը դուրս եկա որոշ գնումներ անելու: Արևը հաճելի կծկծում էր, ծառերը սկսել են բողբոջել: Առհասարակ ձմեռը մեզ մոտ անտանելի է. ծանր ու մեծ սկսվում է ու չի վերջանում: Քաղաքում չես հասցնում ձյան գեղեցկությունը նկատել. գետինը սառցակալում է, հետո արագ վերածվում ցեխի, հետո ցեխաջրի: Եվ ամեն դեպքում էլ քայլելը դառնում է պատիժ: Գորշ ու տհաճ գույներն իշխում են, ցուրտը մտնում է տներն ու ներսդ, կծկում, ընկճում: Եվ երկար սպասված ու մոտեցող գարնան շուքն արդեն ջերմացնում է, մարդիկ ասես ուշքի են գալիս ու կենդանություն ստանում: Մեր քաղաքն անճանաչելի է դարձել. նոր ու շքեղ խանութներ, սրճարաններ ու ռեստորաններ: Ափսոս, որ այս ամենը չկար 20 տարի առաջ, երբ երիտասարդ էինք: Այն ժամանակ հատ ու կենտ աղքատիկ սրճարաններ էին, հիմնականում տարեց ու գեր մատուցողներ՝ կիսակեղտոտ գոգնոցներով, որ մատուցում էին քիթ ու մոռթները խառնած, քոսոտ ու անպոչ սուրճի բաժակներով: Բայց, արի ու տես, որ այն ժամանակ քաղաքը մերն էր, մենք էլ՝ տանտիրոջ նման: Հիմա ինչ-որ անհասկանալի ու անորոշ բան կա: Պարզ չէ ի՞նչ, բայց տանտիրոջ զգացողությունը հաստատ չկա, որովհետև դռներ կան, որ փակ են քեզ համար, էլ ի՞նչ տանտեր:

Հանկարծ նկատեցի, որ դիմացի մայթին աղջիկս է մի երիտասարդի հետ: Տղան բարձրահասակ էր, ոնց որ թե գեղեցիկ: Քայլում էին դանդաղ, խոսում էին, որ հեռվից նման էր վիճելու: Նրանք շրջապատը չէին տեսնում, տարված էին իրարով, բայց երջանիկ չէին:

Կանգնած մնացի մինչև հեռացան: Ինչ-որ բան խառնվեց մեջս. աղջիկս հասունացել է: Ես, մշտապես հոգսերով, կենցաղով ու մի քիչ էլ երազելով տարված, տեսնում էի դա, բայց հանկարծ հասկացա, որ չեմ հասկացել: Ինձ համար նա շատ հմայիչ ու սիրունիկ աղջիկ է ու միայն իմը: Եվ հիմա հետաքրքրությունը, զարմանքը, անհանգստությունը միանգամից գլուխ բարձրացրին:

Աշխատանքային օրվա մյուս կեսին Էդգարի հետ նախագիծը մշակեցինք: Ծանր էր առաջ գնում: Աչքիս առաջ աղջիկս էր՝ փոքր-ինչ կարմրած դեմքով, ու էն երիտասարդը, որ նրան ինչ-որ բան էր փորձում համոզել:

...Աղջիկս ինձ ընդունեց սովորականի պես, պաշպեց, պայուսակս վերցրեց: Նա խաղաղ էր, էլի անհաղորդ:

-Ո՞նց էր օրդ, ի՞նչ ես արել,- հարցրեցի:

Քթի տակ ինչ-որ բան ասելով՝ գնաց խոհանոց: Գաշի ժամանակ փորձեցի խոսեցնել՝ գարուն է, դրսում հաճելի է, կարելի է ընկերների հետ փողոցներում թափառել, իսկական սիրահարվելու ժամանակ է և էլի նման անհեթեթություններ: Ես ասացի, ես լսեցի, բացարձակ ոչ մի արձագանք: Եվ քանի որ շտապում էի, պարզապես վիրավորվեցի նրա համառ լռությունից ու տանից դուրս եկա:

Արան արդեն սպասում էր ծանոթ սրճարանում, ինչպես միշտ համբերատար, զարեջրի բաժակը ձեռքերի մեջ: Շուտով մեկ տարի կլիներ, որ իմ նախաձեռնությամբ միասին հաղորդաշար էինք սկսել հեռուստատեսությամբ՝ երիտասարդական թատրոնների մասին: Մենք տարեկիցներ էինք, հետաքրքրությունները համընկնում էին, և համագործակցությունը միանգամից ստացվել էր: Մենք սիրահարված էինք ոչ միայն թատրոնին, այլև իրար: Դա իրականում շատ բացահայտ էր, բայց ասես լուռ պայմանավորվածություն կար այդ մասին չխոսելու, չնայած՝ նա զգացմունքները չէր թաքցնում: Ես նրա հետ շատ անկեղծ էի, շատ անկաշկանդ, նաև համոզված էի, որ երբեք ինձ չի նեղացնի:

Մենք սուրճ խմեցինք, երկար մշակեցինք հերթական հաղորդման սցենարը՝ միասին լինելու հաճույքը չթաքցնելով ու բաժանվեցինք բավական ուշ:

Աղջիկս պառկած կարդում էր: Գուցե ես շատ եմ զբաղված ինձանով և իմ գործերով ու քիչ ժամանակ եմ տրամադրում նրան: Նստեցի կողքին, փորձեցի հետը խոսել. պատասխանեց հեռագրային ոճով ու շարունակեց կարդալ: Համակերպված վեր կացա ու մի գիրք էլ ես վերցրեցի: Իհարկե կարդալ

չստացվեց: Տեսնես ուրիշներն էլ իրենց ապրած կյանքն այդքան քչփորելու թուլություն ունեն, թե ե՞ս եմ շեղված... Էլի մտովի շուռունուռ եմ տալիս կյանքս: Մի մեծ հարցական կախվում է օդում, ծանր ճոճվում ու պատասխանի սպասում, սխալ թե ճիշտ ապրելու մասին մտածել տալիս, հետո ձուլվում մտքերիս մեջ՝ երբեք պատասխանի չարժանացած: Ապրածս կյանքի մեջ, անշուշտ, սխալներ կան, բայց հազիվ թե դրանցից հրաժարվելու ցանկություն կա: Տեսակի խնդիր է, ի՞նչ անես: Աստիճանաբար մտքերս կոնկրետացան, հավաքվեցին: Երկու օր հետո հաղորդաշարը շարունակելու թույլտվության համար հանդիպելու էի հեռուստատեսության նոր նշանակված վերադասին, իսկ վաղը՝ տեղակալին:

Տեղակալի հետ պայմանավորվել էինք փողոցում /չգիտեմ՝ ինչու այդպես ուզեց/. պարզվեց մեքենայով է ու առաջարկեց նկարիչ ընկերոջ արվեստանոցը գնալ՝ սուրճ կխմենք ու կզրուցենք: Տիպիկ զգացողությունից ու սրտիս նեղությունից դառնահամ զգացի: Նա բավական տարիքով էր, աղվես հիշեցնող սուր դիմագծերով, անհանգիստ հայացքով:

Արվեստանոց կոչվածը նկուղային հարկի բնակարան էր, և ինչպես սպասում էի՝ այնտեղ ոչ ոք չկար: Ես անմիջապես խխունջի նման պատյանի մեջ քաշվեցի: Մեր խոսակցությունը ոչ մի կերպ չէր ստացվում, որովհետև աշխատանքի մասին չէինք խոսում: Ջարմանալի է՝ ինչքան ողորմելի եմ դառնում տղամարդիկ, երբ փորձում եմ որևէ կնոջ սիրահետել անկապ տարբերակով: Սկսեցի պատերից կախված նկարները նայել ու տափակ բաներից խոսել: Իհարկե ոչինչ չկանխեցի. մոտեցավ ու մեջքս գրկեց: Մեջս՝ սեղանի վրայի կոնյակի շիշը նրա գլխին ջարդելու ցանկություն էր, բայց ո՞նց... Ես դպրոցական չեմ, հասուն կին եմ, ամուսին չունեմ, պահվածքով բավական անկաշկանդ եմ, նաև մեր կյանքի ու իրականության համար երևի թե այս խղճուկ փորձի մեջ ոչ մի արտառոց բան չկա: Բայց այս ընկերն ի՞նչ իմանա, որ ես ինձ բնավ հասուն կին չեմ զգում, որ ես այս՝ գուցե ընդունված, բայց ապուշ տեսարաններից զզվում եմ, որ հիմա կատաղությունից շունչս կտրվում է: Նայում եմ դիմացիս նկարին ու մտածում՝ ի՞նչ անեմ, որ շատ չվիրավորեմ, որ շատ ծիծաղելի չլինեմ, բայց այս ապուշն ինձ հանգիստ թողնի: Կոպիտ հրեցի, պայուսակս վերցրեցի ու հնարավորին չափ հանգիստ ասացի.

-Դուք ինձ կտանեք, թե՞ ես գնամ...

Մենք ծանոթ էինք վաղուց, չփվել էինք միայն աշխատանքի բերումով, կար հարգանքի որոշակի չափ: Հավանաբար դեմքիս զզվանքի արտահայտությունը նրան շփոթեցրեց:

Աշխատանքի մասին խոսեցինք ետդարձի ճանապարհին:

Երբ հասա հիմնարկ, Էդգարն արդեն սպասում էր. մենք անմիջապես սկսեցինք աշխատել: Ամբողջ ընթացքում տարօրինակ ցանկություն կար՝ նրա ձեռքը բռնելու: Ես այն զգացողությունն ունեի, թե ինչ-որ լարծուն բան կպել է ինձ, և որ կողքինիս ձեռքը բռնեմ՝ կմաքրվեմ: Ու այդ անկապ գաղափարն այնքան առարկայացավ, որ արդեն բացարձակ չէի հասկանում՝ ինչ ենք խոսում: Ես հանկարծ իրոք նրա ձեռքը սեղմեցի՝ ստացվեց խոսքն ընդհատելու համար ու շատ բնական...

Երեկոյան տառապում էի գլխացավից: Երևի տղամարդիկ որ մեծանում են, մի քիչ ցնդում են: Պետք է մխիթարվեմ, որ հետո զուսպ էր ու մեղավոր: ...

ՕՖ, այդ տղամարդիկ: Ցավոք, նրանք բոլորը, գուցե չնչին բացառություններով, ունեն համընդհանուր հատկանիշներ, օրինակ՝ նրբանկատության բացակայությունը, և հիմնականում մինչև զրոյական մակարդակի: Կամ, բնական ինքնավստահության պակասը, որը ոչ թե սեփական ես-ի առավելությունն է, այլ՝ սեռի, որն էլ ենթադրում է ուժեղ լինել: Բայց արի ու տես, որ դա ձեռքբերովի չէ... որ չկա, ի՞նչ անես: Բայց ցավոք, ցանկացած կին, որքան էլ ինքնուրույն, ինքնավստահ ու կայուն լինի, միևնույն է իր կողքին ուժի գոյության կարիքն ունի:

Աղջիկս երկար խոսում էր հեռախոսով, ավելի ճիշտ չէր խոսում, լսում էր: Ես ի՞նչ անեմ, որ այս աղջիկն ինձ հետ բացվի: Արդյոք սխալ բան կա մեր հարաբերություններում, թե՞ խառնվածքի հարց է: Պետք է փորձել քնել. հաջորդ օրը նկարելու էինք հերթական հաղորդումը, որը կարող էր և վերջինը լինել, եթե ես համաձայնության չգայի վերադասի հետ:

Նկարահանումը շատ ծանր անցավ: Ղեկավարը բավականին տափակ էր, անհետաքրքիր և ինչպես սպասում էի՝ ինքնասիրահարված: Նա ոնց որ թե մի սիրելի ունեի՝ դերասանուհիներից մեկն էր, որին անդադար առաջ էր գցում, դրանից էլ մնացածները կատաղում էին: Նախ խնդրեցին դահլիճի տիրոջը խոսք տալ, քանի որ իրենցից փող չի վերցնում ու բերեցին մի անտաշ կերպարի կապեցին գլխիս: Միկրոֆոնը ձեռքիս՝ շվարել էի: Դետո էլ ղեկավարը խախտեց նախնական պայմանավորվածությունը և մեջտեղ բերեց այնպիսի ներկայացումից հատված, ուր գլխավոր դերում իր սիրելին էր... Նա էլ, հակառակի պես, կարգին անտաղանդ էր: Դերասաններից մի քանիսն այդ փաստից, նաև ղեկավարի դանդաղկոտությունից նեղված՝ սկսեցին փնթփնթալ, հետո վիճել: Իմ գլխացավը բռնեց. մտա փորձասենյակ, որ դեղ խմեմ այն պահին, երբ դերասաններից մեկը ջրով լիքը շիշը տվեց գետնով... Ես ոտքից

գլուխ ջրվեցի: Սկսվեց ներողությունների թատերականացված տեսարան: Այդ ամբողջ անհեթեթությունից և կատաղած էի, և ծիծաղս էր գալիս: Ինչևէ... բավական դժվարությամբ հաջողվեց անցնել մեր սցենարին, որից հետո անհամեմատ դյուրին էր: Անասելի հոգնած ու դժգոհ մեր օրից՝ Արայի հետ փորձեցինք սրճարան մտնել: Անկյունի սեղանի մոտ աղջիկս էր՝ նույն տղայի հետ: Ես ականա նեղվեցի, գլխով ցույց տվեցի, ու մենք դուրս եկանք: Քայլում էինք արդեն լուսավորված փողոցներով: Արան անվերջ խոսում էր՝ լավ հասկանալով, որ չեմ լսում: Ես անհասկանալի վիճակում էի. գլուխս պայթում էր, աչքիս առաջ աղջիկս էր՝ քիչ կարմրած ու տխուր: Օդի մեջ գարնան շունչ կար: Ջգացի, որ կողքինս արդեն լուռ է, ըստ երևույթին հոգնությունն ու իմ լռությունը ճնշել էին: Եվ հանկարծ, լրիվ անհասկանալի, անբացատրելի պատճառով, փողոցի մեջտեղում, բոլորի աչքի առաջ մենք երկար-երկար համբուրվում էինք: Տուն մտա հիմնավորապես խճճված մտքերով:

Վերադաս կոչվածը երիտասարդ էր՝ Նազարի բեղերով, մեծամիտ, ինքնասիրահարված: Իմ կարծիքով ինքնասիրահարված տղամարդիկ անմիջապես տհաճություն են բուրում: Նման մեկին հանդիպելիս՝ ես ականա դառնում եմ չզիջող: Բազմիցս համոզվել եմ, որ ինքնասիրահարված տղամարդուն եթե չես քծնում՝ կորած ես. հույս ունենալ, թե նրանց հետ համագործակցությունից ինչ-որ բան կստացվի, անհույս է: Եվ ինչպես ենթադրում էի ստացվեց երկդիմի, տխմար խոսակցություն, երբ երկար խոսում են բացարձակապես տարբեր լեզուներով, բաժանվում են ոչինչ չորոշած՝ պարզ հասկանալով, որ էլ չեն հանդիպի: Ու ես հասկացա, որ մեր հաղորդաշարը փակվեց:

Քայլում էի դանդաղ, բայց մեջս ճնշող ու նյարդային բան կար: Ցավի ու ավստասանքի խառնուրդը կոկորդս սեղմում էր: Այդ հաղորդումներն ինձ համար թանկ էին: Ես միշտ թուլություն եմ ունեցել թատրոնի հանդեպ: Սա նաև ստեղծագործական հետաքրքիր աշխատանք էր, ժամեր, երբ ես ինձ լավ էի զգում: Ընդ որում, ունեի բացարձակ ազատություն այդ ժամերը տնօրինելու: Հիմա առաջարկում են իրենց միջամտությունը, առաջարկում են պարտադրելու նման՝ ինձ համար անընդունելի ու նաև անհետաքրքիր պայմաններով: Այդ դեպքում արդյունքը դժվար թե ինձ բավարարի: Միաժամանակ աչքիս առաջ էր Արան. մոռանալ ու անտեսել երեկվանը, ձևացնել թե ոչինչ չի եղել՝ դժվար թե ստացվի, այդ պոռթկումը չափից դուրս անկեղծ էր:

Աչքիս առաջ դարձյալ բեղավոր ապուշը հայտնվեց՝ իր անհամ գաղափարներով, գյուտ արածի ինքնագոհությամբ, դաստիարակող տոնով: Տեսնես ինչո՞ւ են մեր մեջ մանկուց էթիկայի նորմեր սերմանում, որոնցով էլ միշտ կաշկանդված՝ անհրաժեշտ պահերին չենք կարողանում դիմացինին ասել, որ ինքն ընդամենը կյանքի մակերեսը սերտած տհաս է:

ՕՖ, լրիվ մոռացել էի, որ երեկ դարձյալ աղջկաս ու այն տղային տեսա...

Հիմնարկի դուռը բացելիս միայն զգացի, որ աչքերիցս արցունքներ են թափվում:

Տանը փորձեցի նախահարձակ լինել:

-Ես քեզ արդեն մի քանի անգամ տեսնում եմ մի տղայի հետ:

Աղջիկս թերահավատ նայեց ինձ:

-Ուզո՞ւմ ես նկարագրեմ. կանաչ վերարկու ունե՞ր...

-Հետո ի՞նչ:

-Հետո այն, որ ես ուզում եմ ամեն ինչ իմանալ քո մասին:

-Դու իմ մասին ամեն ինչ գիտես, իսկ կանաչ վերարկուով տղայի մասին պարտադիր չէ իմանաս:

Ես ինձ հազիվ զսպեցի, որ չգոռոզոռամ:

-Աշխատիր ինձ չնեղացնել, կարծում եմ՝ ես երբեք դրա առիթը քեզ չեմ տվել:

Ձարմանալիորեն գտնված պատասխան էր, որովհետև նա հանկարծ փափկեց.

-Լավ. առանձնապես ոչինչ չկա, ուզում է, որ մենք հանդիպենք:

-Իսկ դո՞ւ:

-Ես նրան չեմ հավատում, մա, բայց խնդրում եմ էլ հարցեր չտաս, շատ եմ խնդրում, ուրիշ ոչինչ չկա:

Ես լռեցի, մի տեսակ մոլորվեցի: «Չեմ հավատում». իսկ դու ի՞նչ գիտես հավատալ-չհավատալու մասին: Այս անտեր խառնաշփոթ աշխարհում մինչև հասկանում ես ո՞ւմ հավատաս ու ե՞րբ՝ կյանքիդ կեսն անցնում է, իսկ մնացած կեսն արդեն չի բավարարի ճիշտ ապրելու համար... Երբ երիտասարդ ես, չհավատալու համար կոնկրետ պատճառներ են պետք: Միայն տարիներ անց, երբ արդեն հասուն ես, կարող ես առանց պատճառի չհավատալ՝ ուղեղով, սրտով... Ու ես սրտով հասկացա, որ այդ տղան ինչ-որ մեղք գործել է արդեն:

-Լավ, կարծում եմ ինձ համար ինչ-որ բան պարզ է. նա քեզ հասցրել է նեղացնել:

-Ձզվում եմ, երբ սուտ են խոսում, սուտ երդվում են, երբ խաբում են... Մա, ինձ մի խոսեցրու, խնդրում եմ,- ու ինձ թվաց, որ շարունակի՝ լաց կլինի:

Սիրոս կարծես աքցաններով սեղմում էին...

-Լավ, եթե չես ուզում, կարող ես էլ ոչինչ չասել: Միայն, շատ եմ խնդրում, մի տխրիր: Ու նաև մի խորհուրդ. երբեք չհավատաս, թե կյանքում մի անգամ են սիրում: Եթե դու ընդհանրապես ի վիճակի ես սիրելու, նորից կսիրես: Անպայման կսիրես:

Չետո մենք երկար խոսեցինք իմ անհաջողությունների մասին, նա փորձեց ինձ մխիթարել: Ու այդ ամբողջ ընթացքում ես նրան փայփայում էի, ինչպես փոքր ժամանակ ու մտմտում. «Ես ինչպե՞ս քեզ հասկացնեմ, որ երբեք չպատկերացնես, թե ո՞ւմ ես ուզում տեսնել կողքիդ: Դա նմանվում է մի լեգենդի՝ հյուսված գեղեցիկ մանրամասներով, որ այդպես էլ իրականություն չի դառնում: Ես ի՞նչ անեմ, որ գոնե քեզ չնեղացնեմ. ո՞նց պաշտպանեմ... Չեմ կարող: Կնեղացնեմ մարդիկ, այլ կերպ չեմ կարող: Ո՞նց հասկացնեմ քեզ, որ կարողանաս չնեղանալ, երբ ես, այս տարիքում, դեռ չեմ կարողանում...»:

Երկու օր անց Արայի հետ նստած էինք ծանոթ սրճարանում՝ մի-մի բաժակ սուրճը սեղանին, իսկ մենք՝ մտահոգ ու ընկճված: Մեր խոսակցությունն ինչ-որ դժվար էր ստացվում:

-Գուցե այնուամենայնիվ համաձայնվե՞ս այդ բեղավոր տխմարի տարբերակին:

-Չէ, վերջ:

-Լա՞վ ես մտածել:

-Չէ...

- Ինձ համար չեմ ասում, ես միևնույն է իմ գործն ունեմ, այս մեկը չլինի, մյուսը կլինի: Ես ռեժիսոր եմ, հասկանո՞ւմ ես:

-Գիտեմ: Չէ, վերջ:

-Ի՞նչ ես տասնհինգ անգամ նույն բանը կրկնում, հասկացա:

-Դու ես ստիպում կրկնել... տասնհինգն ի՞նչ թիվ էր, անկապ:

Մի որոշ ժամանակ լուռ էինք, յուրաքանչյուրս մեր մտքերի հետ:

-Իսկ մե՞նք, - նա դա հարցրեց գլուխը կախ, բաժակը ձեռքերի մեջ պտտելով:

-Մենք ի՞նչ:

-Քեզ ի՞նչ պատահեց...

Ես իրոք զզվելի էի, դերի մեջ մտածի նման: Բայց նրա համակրելի կերպարանքից ու իրեն բնորոշ փափկությունից խեղճացա.

-Ես նեղված եմ, չե՞ս հասկանում: Ամեն ինչից՝ թե որ մեր շարքը չի լինելու, թե որ քեզ չեն տեսնելու:

-Իմիջիայլոց ես ոչ մի տեղ չեմ գնում ու ցանկացած պահի կարող եմ կողքիդ լինել:

-Նշանակություն չունի: Մենք չենք հանդիպելու:

-Այսօր դու անհասկանալի ես ու անտանելի: Կխոսենք ուրիշ անգամ:

Անցած մեկ տարվա ընթացքում ես այնքան էի վարժվել նրա շարժումներին, բարի ժպիտին...

Անասելի տխուր էի: Իմ մեջ ես ինչ-որ բան արդեն կորցրել էի, իմ վերջին տարիների կյանքից՝ ինձ համար հաճելի մի կտոր: Կորստի զգացողությունը շատ սուր էր, մնում էր հարմարվելը:

Առավոտյան ասացին, որ տնօրենը կանչել է: Մինչև երրորդ հարկ հասնելը, մտա արվեստի բաժին, տղաները հավաքված խմում էին:

-Ծանոթացիր, մենք նոր աշխատող ունենք:

-Ինձ Գրիգ եմ ասում,- ձեռքը մեկնեց մի երիտասարդ՝ մտերմիկ ու ջերմ ժպիտով:

Նա հավանաբար 35-ի մոտ էր, խոշոր կապույտ աչքերով, միջահասակ, շատ համակրելի:

-Ձեր բախտը բերել է, որ այս բաժնում եք հայտնվել, ամբողջ հիմնարկում միակ քիչ թե շատ տանելի տեղն է: - Ես շտապում էի տնօրենի մոտ:

-Ձեզ կանչել եմ, որովհետև ինձ ասել եմ, որ ձեր թարգմանություններում բազմաթիվ սխալներ կան,- խիստ պաշտոնական հայտարարեց տնօրենը:

-Խնդրում եմ, ավելի կոնկրետ:

-Ես դեռ չեմ նայել, պարզապես որոշեցի զգուշացնել, որ ուշադիր լինեք:

-Ես օդի մեջ խոսակցություններ չեմ սիրում:

-Իսկ ես չեմ սիրում, երբ ինձ հետ մնան ձևով եմ խոսում: Գնացեք և ավելի ուշադիր եղեք, - ասաց ու անմիջապես էլ գլուխը կախեց թղթերի վրա: Այսինքն՝ խոսակցությունն ավարտված է:

Այ քեզ հիմար, չի նայել, բայց գիտի: Ես շատ լավ հասկանում էի, թե որտեղից այս փոփոխությունը, նախորդ օրը տեքստերը հանձնել էի պատասխանատուին, միաժամանակ զգուշացնելով, որ առանց ինձ ուղղումներ չարվեն: Օձի հայացքով այդ ակնոցավոր կաշաղակը դա կուլ չէր տա:

Սովորաբար ենթակայի ինքնավստահությունը չի ներվում, եթե վերադասը ողորմելի է:

Նեղսրտած դուրս եկա: Օրս փչացավ:

Օրվա վերջում դռների մոտ Գրիգն էր կանգնած:

-Ես ձեզ առաջարկում եմ մեքենայով տուն տանել,- հին ծանոթի նման դիմեց ինձ՝ միաժամանակ արագ ձեռքիցս թղթերով լի պայուսակը վերցնելով:

Ճանապարհին մենք կենսագրական տվյալներ էինք լրացնում. պարզվեց 34 տարեկան է, ճարտարապետ է, ամուսնացած չէ, ծնեռ ու ցուրտ չի սիրում, շուն ունի:

Երբ տեղ հասանք, ես նրան հրավիրեցի տուն՝ համոզված լինելով, որ չի գա: Եկավ: Ի՞նչ արած: Ծանոթացրի աղջկաս հետ, միասին ճաշեցինք, սուրճ խմեցինք: Նա հին ու նոր պատմություններ էր պատմում, իսկ ես մեր հիմնարկի աշխատողների ձևերն էի անում, ու մենք երեքով անդադար ծիծաղում էինք: Երբ նա գնաց, իմ նեղսրտության հետքն էլ չէր մնացել:

Օրերը գլորվում են: Արդեն ապրիլ ամիսն է: Չես հասցնում աչքդ թարթել՝ տարին կես է լինում: Կենցաղն ու հոգսերը ժամանակի մի մասը կուլ են տալիս՝ միայն հոգնությունն ու տրտմությունն թողնելով:

Հիմնարկում բավական լարված են: Թարգմանություններիս համար խոստացած գումարը չտվեցին՝ պատճառաբանելով, թե իբր ներսի աշխատողներին հոնորար չի հասնում: Սխալներս այդպես էլ չհայտնաբերվեցին, բայց փոխարենը, ինձ համար միանգամայն անհասկանալի պատճառով, արժանացա տնօրենի անբարեհաճ վերաբերմունքին: Ինքը գիտի, ուշքս չի գնում: Եվ ընդհանրապես, ինձ համար լրիվ անհասկանալի հարաբերություններ են. իրար տեսնելիս ջերմ-ջերմ ժպտում են, իսկ ետևից խայթում՝ հնարավորին չափ թունավոր: Ես մեղք ունե՞մ, որ և լպրծուն ժպիտներից եմ տրաքում, և մեկը մեկի ետևից ասվող չարություններից: Երևի անհաշտ բնավորությունն ունեն կամ էլ ամեն ինչ շատ սուր եմ ընկալում, հակառակ դեպքում ինչու ընդհանուր համապատկերում ինչ-որ չեմ տեղավորվում: Երևի երջանիկ եմ նրանք, ովքեր աշխարհն ու մարդկանց ընդունում են այնպես, ինչպես կան, ամեն ինչ վերածնելու ու վերափոխելու մարմաջով չեն տառապում: Հաճախ միջանցքներում զրուցում եմ Գրիգի հետ: Մնացած ժամանակն անցնում է թղթերի մեջ: Աշխատանքի վերջին մեկ ժամը և դրանից հետո ևս երկու ժամ աշխատում եմ Էդգարի հետ: Նրա հետ աշխատելը օր օրի հետաքրքիր է դառնում: Նա արտաքուստ հավասարակշռված և հանգիստ է այնքան, որ տպավորությունն այն է, թե կյանքում երբեք և ոչ մի պարագայում չի սխալվի ու չի շեղվի: Նա միայն երբեմն աննկատ քթի տակ ժպտում է, երբ աշխատանքի մի կտորը հաջող է ստացվում կամ մռայլվում, երբ

ես թթված են լինում կամ բողոքում են գլխացավից: Այդ ինքնատիպ կենդանության նշաններն ինձ դուր են գալիս և նաև այն, որ իմ հանդեպ մի տեսակ զգույշ հոգատարություն ունի, ինչի կարիքը ես շատ են զգում:

Երեկոյան սովորաբար հոգնած են ու հիմնականում տխուր: Ապագայի անորոշությունը սպանում է: Շատ հաճախ կախված ես ինչ-որ մի տիպի քմահաճույքից, և այդ տիպը, որ ուզես թե չուզես դեկավար է կոչվում, որ կամ ապիկար է, կամ խորամանկ ու հաշվեհարկատ, կարող է մի օր հայտարարել, որ այլևս պետք չես: Ու դու ոչինչ, բացարձակապես ոչինչ չես կարող անել: Ես այդ անզորության գիտակցությունից ցնդում եմ... ՕՖ. մենք էլ մեր ժողովրդի հերթական դժբախտ

սերունդն ենք: Դաստիարակվեցինք մի գաղափարախոսությամբ, որին չէինք հավատում, անկախ մեզանից պատրաստվեցինք մի կյանքի, որը հանկարծ կտրվեց: Եվ հայտնվեցինք մեզ համար անծանոթ աշխարհում: Այժմ պարտադրված հոգեբանությամբ փորձում ենք համակերպվել ու ապրել: Եվ կոտրվում ենք ... Դժվար են դիմանում: Մենակությունից ու պատասխանատվությունից, հոգսերից, նաև զավակիս ճակատագրի ու ապագայի անորոշությունից ճկվում եմ:

Օրվա վերջում Գրիգը հիմնարկի դռան մոտ կանգնած էր:

-Ես քեզ եմ սպասում, որ տուն տանեմ: Մի վախեցիր, վերև չեմ գա:

-Ես տուն չեմ գնում, ընկերուհուս ծնունդն է:

-Իսկ եթե մեկ ժամ ուշ գնա՞ս:

Նրան չէի կարողանում մերժել: Գեղեցիկ սրճարան էր, ու պետք է խոստովանեմ, որ ես ինձ լավ էի զգում աշխարհում ամեն ինչից դժգոհ այդ համակրելի տղամարդու կողքին: Նա փնովեց մեր տնօրենին, անցավ հիմնարկի, ապա աշխարհի գեր կանանց, ասաց, որ նյարդայնանում է տձև ու անճաշակ կառույցներից, զգվում է սև ակնոցներով, խուզած մազերով, պաչպչվող տղաներից, սև շորերով ու շրթունքներով, կապույտ եղունգներով աղջիկներից, քաղաքի աղբից...

-Կներես, իսկ ե՞ս քեզ դուր են գալիս:

-Ես այդքան անտանելի չեմ, դու ինձ փնփնթան պառավի տեղ չդնես: Ուշադիր եղիր ու կտեսնես, որ ճիշտ եմ ասում: Իսկ դու դուր ես գալիս, հակառակ դեպքում ես ինձ նեղություն չէի տա շուրջդ պտտվելու: Դու նախ արտաքինով ես համակրելի, շատ բնական ես ու շատ հաճելի, վրայիցդ էլ էժանագին օժանելիքի հոտ չի գալիս:

Ես շփոթվեցի. ի՞նչ գործ ունեն՝ դո՞ւր եմ գալիս - դո՞ւր չեմ գալիս... Ու քանի որ մեկ ժամն արդեն անցել էր՝ վեր կացա:

Ընկերուհուս տանը լիքը ժողովուրդ էր. մեր հին ընկերներից, ամուսնու կողմից: Բոլորը հաճույքով ուտում էին ու զրուցում: Բայց կարճ ժամանակ անց խոսակցությունը թեժացավ ու ծավալվեց ծանոթ ու համընդհանուր թեմաներով:

-Տեսնես սրանք ե՞րբ եմ կշտանալու ու մի քիչ էլ ժողովրդի մասին մտածեն:

-Հույս չունենաք, գնալով ավելի անտանելի եմ դառնում ու լկտիանում:

-Իրենք են՝ իրենց երկիրը, ինչ ուզում՝ անում են:

-Իրենցը չի, ի՞նչ ես խոսում, սրանք այնքան ողորմելի են, որ տեր լինել չեն կարող: Եթե նրանք երկրի իրական տերը լինեին ու իրենց էլ տեր զգային, ոչինչ չէին վաճառի ու չէին քանդի:

-Եթե ես մի ընկերակալ եմ, սրանց մարդուկներ կսարքեի. փոքր-փոքր, իսկը իրենց արժանի պատկերը՝ մանր ու ճղճիմ:

-Իմիջիայլոց, նրանց սեփական կերպարանքներն էլ իրենց բավական է, այնքան անճոռնի են, որ վերածնելու կարիքը չունեն:

-Ես ոչ մի կերպ չեմ հասկանում, ահռելի տներ են սարքում էս երկրում, այսինքն հիմնավորվում են, բայց ինչո՞ւ են էդ նույն երկիրը քանդում:

Վերջին տարիների փորձից արդեն պարզ էր, որ այս խոսակցությունն անվերջ է, և ես, պատճառաբանելով, որ աղջիկս մենակ է, դուրս եկա: Աղջիկս արդեն քնած էր: Ես փորձեցի հեռուստացույց նայել: Մի քանի ընկերակալ արդեն չդիմացա ու անջատեցի: Բայց, ցավոք, դա նաև մութ էկրանից աչք ծակող ու հոգի պղտորող հրեշ է, որ լափում է: Լափում է մեր լեզուն, մեր մտածողությունը, մեր բարոյականությունը... Երբ հեռուստացույցի էկրանից միայն տզետ շեշտադրումներով, օտար խոսվածքով մայրենիդ է և երևակայելուց բերանները ծռված հաղորդավարուհիներ, երբ ֆիլմեր են, ուր կամ սպանում են, կամ սեքսով զբաղվում, երբ համերգներ են, որտեղ հարեմի հանդերձով մեր աղջիկները պորտապար են պարում, արդեն քո տանը հեռուստացույցն անջատես թե ոչ՝ միևնույն է սարսափ է:

...Գլխացավիս համար ես ինձ եմ մեղադրում, որ շատ բան չտեսնել չեմ կարողանում, չզայրանալ չեմ կարողանում: Բայց ո՞նց չտեսնես, օրինակ՝ այս սև արկղը տանդ դրած՝ ի՞նչ անես, չմիացնե՞ս:

Արճարանը, որտեղ նստած էի Արայի հետ, կիսամութ էր: Մենք ծխում էինք, շատ իմիջիայլոց խոսում դեսից-դեմից: Այդ ամբողջ ընթացքում նա իմ

ձեռքը բռնել էր, ու մի հաճելի ջերմություն էր փոխանցվում: Բայց մեջս ոնց որ դատարկ լինեմ, որովհետև ինձ համար ամեն ինչ պարզ էր արդեն: Նա ինձ դուր էր գալիս, շատ-շատ, բայց զարմանալիորեն, առանց տառապելու ես որոշել էի այլևս նրա հետ չհանդիպել՝ «գիտե՞ս ինչո՞ւ, դու զգացմունքային ես ու պարզ, ես էլ: Մենք կխճճվենք, ու համը դուրս կգա: Դու չես տեղավորվի իմ ու ընտանիքիդ արանքում: Ավելի լավ է ես հիմա քեզ հանգիստ թողնեմ...»:

-Ի՞նչ ես մտածում մեր մասին,-հարցրեց՝ ուղիղ աչքերիս մեջ նայելով, -ու խնդրում եմ, չձևացնես, թե չես հասկանում ի՞նչ եմ ասում:

-Մենք, կարծեմ, 40 տարեկան ենք, չէ՞:

-Դրանով ի՞նչ ես ուզում ասել...

-Որ մեր աղջիկների սեր խաղալու ժամանակն է, ոչ թե մեր, - ես իբր փորձեցի խուսափել պարտադիր բացատրությունից:

-Դերասանություն մի արա. քո ոչ տեսքն է 40-ի, ոչ պահվածքդ, ոչ մտքերդ: Կարծում ես՝ չեմ հասցրե՞լ ճանաչել: Եվ առհասարակ, ձևացնելը քեզ չի սազում:

-Լավ... Մենք սիրահարված ենք, չէ՞...

-Ըհը...

-Զե՞ս կարծում, որ մի քիչ էլ շարունակենք՝ կխրվենք:

-Երևի...

-Մենք, մի տարի դա հասկանալով, մեզ խելոք ենք պահել, չէ՞: Հիմա արի ես տափակ խոսակցությանը վերջ տանք:

Քիչ հետո մենք սրճարանից դուրս եկանք և երկար ժամանակ լուռ քայլում էինք:

Հետաքրքիր է, ինչո՞ւ կյանքում սիրահարվում ես հիմնականում ուղեղի անջատած, բայց հետո անջատված ապրել չի ստացվում. ինչ-որ հանգամանքների պարտադրանքով ուղեղդ լարվում է ու պարզվում, որ սխալվել ես... Դե արի ու սխալդ ուղղիր: Նյարդերդ չեն դիմանում, սիրտդ զարմանալի դիմադրում է, մտքերդ չեն ենթարկվում: Եվ այդ սեր կոչվածը, որ թվում է՝ հրաշք է, հանկարծ դառնում է պատիժ, երջանկություն բերելու փոխարեն՝ ցավ պատճառում:

Հեռախոսը զնգաց, ընկերուհիս էր, լաց էր լինում.

-Խնդրում եմ անպայման գաս:

-Ի՞նչ է պատահել,- սրտաճաք եղա:

-Համենայն դեպս ոչ ոք չի մեռել:

Աշխատանքից հետո վազեցի նրանց տուն: Դուռը բացեց՝ աչքերը կարմրած, մազերը գզգզված, այլայլված ու միանգամից վրա տվեց.

-Պատկերացնո՞ւմ ես, պարզվում է, որ Վովան սիրուհի ունի, - ու սկսեց լաց լինել:

Վովան ամուսինն էր. բավական կիրթ, մեղմ հուճուրդ, բայց սիրուհի՞... խելքս չի կտրում:

-Նախ հանգստացիր: Փորձենք առանց հիստերիայի: Ո՞վ հայտնեց այդ հրաշք լուրը:

-Լենան՝ ընկերոջ կինը: Երեկ մեր տանն էր, ծամեց, ծամեց, վերջը՝ չդիմացավ: Էդ լրբի հետ միասին են աշխատում, ամեն օր պարտադիր աշխատանքից տուն է տանում... Վայ, ես չեմ դիմանա, - ու սկսեց լաց լինել՝ նոր երանգով:

-Թե ինչո՞ւ են նման լուրերը հայտնում, թե ի՞նչ աչքալուսանքի բան կա: Դե հանգստացիր:

-Ես քեզ կանչել եմ, որ խնդրեմ-աղաչեմ հետը խոսես:

-Ո՞ւմ հետ:

-Ամուսնուս: Ընկերուհիս ես, չէ՞: Դու գիտես, որ ես ոչ մեկը չունեմ քեզանից բացի, դու երկուսիս հետ էլ մոտ ես, նա քեզ շատ սիրում է:

-Բայց ի՞նչ խոսեմ. քարո՞զ կարդամ:

-Նախ փորձիր իմանալ՝ ճիշտ է, թե չէ...

-Իսկ քեզ ի՞նչ է թվում, որ նա պետք է ինձ զեկուցի: Բացի այդ, դուք երկուսդ էլ գիտեք, թե ես այդ մասին ինչ եմ մտածում, մենք շատ ենք խոսել. ես դա մահացու մեղք չեմ համարում, եթե ընտանիքը չի տուժում: Հետո, խնդրում եմ նաև հիշես, դո՞ւ չէիր ինձ համոզում, որ ընկեր գտնեմ, մոռացե՞լ ես: Որ խորհուրդ էիր տալիս, չէիր մտածում, որ այդ ընկեր կոչվածը կարող է կին ունենալ:

-Շատ եմ խնդրում, դու քեզ մեջտեղ մի բեր, դու լիրթ չես:

-Վայ... իսկ դու ի՞նչ գիտես՝ էն աղջիկն ով է:

-Ինձ մի ներվայնացրու: Չեմ հասկանում՝ ի՞նչ ես ուզում ապացուցել:

-Ոչինչ: Պարզապես ուզում եմ որոշ բաներ հիշես ու քեզ չկոտորես: Դո՞ւ չէիր ասում՝ ինչ ուզում է թող անի, միայն ես չիմանամ:

-Է... բայց իմացա:

-Դու էլ ձևացրու, թե չես իմացել:

-Չե՞՞ն ես առնում:

-Մտքովս էլ չի անցնում: Ես ուզում եմ, որ հանգստանաս, որ քեզ կարգի բերես ու փորձես մտածել: Նախ՝ դու միմչև երեկ ոչինչ չես զգացել, չէ՞. ուրեմն

կարող է լուրջ սխալ է: Երկրորդ՝ կարող է պարզապես ընկերությունն է, վերջապես, կարող է ուղղակի հրապուրանք է: Ավելի խոր դժվար թե լինի, մեր տղամարդիկ այնքան խելք, կարողություն ու նրբանկատություն չունեն երկու կնոջ պահել-շահել ու սիրաշահելու համար, մեկնումեկը հաստատ կտառապի:

-Յետո՞...

-Յետո այն, որ դու մինչև երեկ դժբախտ չէիր. ուրեմն, համոզված եմ, որ անհանգստանալու բան չունես:

-Չէ, դու ինձ իրոք ձեռ ես առնում:

-Իսկ դու քեզ կնիկավարի ես պահում: Առիթի դեպքում մեծահոգաբար դատողություններ եք անում, տեսեք, տեսեք, ազատամիտ ենք, ժամանակակից ենք: Թե՞ ընդհանրապես մարդիկ փիլիսոփայում են միայն ուրիշների համար:

-Կամ դու հետը կխոսես, կամ ես այսօր ևեթ կհայտարարեմ, որ բաժանվում ենք:

-Լավ, կխոսեմ, է՞ս ինչ կրակ էր:

Տունդարձի ճանապարհին բավական լարված էի: Ես նման հիմար դերում երբեք չեմ եղել, երբ ինչ անելս չգիտեմ: Շատ հետաքրքիր է, որ նայի երեսիս ու ասի՝ սիրում եմ, ի՞նչ եմ խոսելու. «Չի կարելի սիրել, սիրահարվել, հրապուրվել, վերջապես՝ ընկերություն անել, որովհետև դու ամուսնացած ես»: Այ քեզ ապուշություն, բայց մա՞րդ ես: Բայց գուցե ապուշություն չի, գուցե ե՞ս դա չեմ հասկանում, որովհետև կողքիս մեկը չունեմ, նաև սեփականատիրոջ զգացում չունեմ: Ո՞վ գիտի... Վովան եկավ պայմանավորված ժամին, շատ սիրալիր, անհանգստացած իմ զանգից.

-Ի՞նչ է պատահել, կարո՞ղ է սիրահարվել ես:

-Ցավում եմ, բայց ոչ: Եվ քանի որ ձևավոր խոսելու տաղանդ չունեմ, միանգամից կասեմ. ձեր տանը ողբերգություն է, դու սիրուհի ունես:

Խեղճն այնպես զարմացավ, որ ինձ թվաց, թե աթոռից կընկնի ու ուշաթափ կլինի:

-Ինչքան հասկացա՝ հիմա էլ քեզ եմ հանգստացնելու,- որոշեցի ես՝ նրա չռված աչքերով ապուշացած հայացքը տեսնելով: - Ուրեմն այսպես, Լենան կնոջդ ասել է, որ դու ձեր աշխատակցուհիներից մեկի հետ... ամեն օր տուն ես տանում և այլն:

Նա մի րոպե էլ սառած մնաց, հետո հանկարծ սկսեց հիստերիկ ծիծաղել: Ծիծաղից ցնցվում էր, չէր կարողանում հանգստանալ: Ապուշ կտրելու հերթը իմն էր... Վերջապես մի քիչ հանգստացավ:

-Այդ աղջիկը, քո ասած այդ աշխատակցուհիս, ընկերոջս հինգ տարվա ընկերուհին է, հենց նույն այդ Լենայի ամուսնու: Երեքս էլ միասին ենք աշխատում: Հիմա պետք է երեխա ունենան: Ճիշտն ասած, ընկերս հիմա շատ է զբաղված հիմնարկում, խնդրեց մի որոշ ժամանակ ես տանեմ-բերեմ: Այ քեզ բան, ո՞վ կմտածեր, որ...- ու նորից սկսեց հռչակալ, բայց այս անգամ ես էլ հետը:

Իսկ ամենալավն այն էր, որ ես հեշտուհանգիստ ազատվեցի ինձ համար միանգամայն անհասկանալի դերից:

Երեկոները ես մենակ եմ: Օրվա անցուդարձը, հոգսերը, մտահոգությունները, ինձ շրջապատող մարդիկ մնում են դրսում, ու ես մենակ եմ: Մենակ եմ իմ մտքերի ու իմ միակ հարստության՝ իմ աղջկա հետ: Մենք իրար չենք ճնշում, ոչինչ իրար չենք պարտադրում և ավելի շատ իրար փայփայում ենք, քան զրուցում: Մենք պարզապես իրար սիրում ենք: Նա ինձ մասնակից չի դարձնում իր հոգսերին, նույնն էլ՝ ես: Ծայրը ծայրին հագիվ եմ հասցնում՝ ինձ պատեպատ տալով, հաճախ անասելի տխրում եմ, բայց չեմ փնթփնթում, հոգսս նաև իրենը չեմ դարձնում: Եվ քանի որ ուրիշների հոգին քչփորել չեմ սիրում, ասենք՝ չեմ էլ կարողանում, հիմա ի վիճակի չեմ շեղվել իմ ձևից ու մտերմանալ նրա հետ: Գիտեմ՝ հոգս ունի, բայց հանգիստ եմ թողնում, որովհետև չգիտեմ, թե ընդհանրապես ի՞նչ են անում նման դեպքերում: Փորձեմ խրատե՞լ. ինձ որ ժամանակին խրատում էին՝ լսո՞ւմ էի: Ասեմ՝ մի տառապիր, իսկ եթե վիրավորվի, թե չեմ հասկանում իրեն ու թեթև եմ նայում իր ցավին: Մի խոսքով, չգիտեմ: Կյանքի այս կտորը երևի դաստիարակության ժանրին կպատկանի... Այսօր քառասուն տարիների հեռավորությունից սկսել եմ հասկանալ, որ դաստիարակություն ասվածն անբուժելի հիվանդություն է: Մեջդ է ու վերջ, ու պրծում չունես: Բայց հետաքրքիր է, անագնիվ կամ անամոթ ծնվում եմ, թե՞ դառնում եմ... Ես իրոք անելիքս ու ասելիքս չգիտեմ: Եվ ստիպված լռում եմ՝ աղջկաս տխուր-տրտում պատկերը չտեսնելու տալով. պարզապես հետը քնքուշ եմ, նուրբ ու ներող:

Եվ հաճախ մենք երկար լռում ենք նույն սենյակում՝ յուրաքանչյուրս մեր մտքերի հետ:

Արդեն մայիսն է:

-Մեր բաժնով հավաքվում ենք, ասել եմ, որ միասին ենք գնալու, - Գրիգի տնավարի խոսելը ինձ դուր էր գալիս:

Նա համարյա երբեք չէր հարցնում իմ կարծիքը, ինքն էր որոշում՝ գնում ենք, ուր ենք գնում, երբ: Եթե փորձում էի հրաժարվել, այնքան էր պնդում, մինչև

տեղի էի տալիս: Ես կարգին չէի հասկանում՝ ինչ միտք ու նպատակ ունեին մեր հաճախակի հանդիպումները: Տպավորությունն այն էր, որ դա ընկերություն էր, առանց որևէ ենթատեքստի: Ու քանի որ նա ինձ դուր էր գալիս, աշխատում էի հնարավորին չափ գլուխս չցավեցնել՝ ինչ-որ բան հասկանալու համար:

Նրանք հավաքվել էին տղաներից մեկի արվեստանոցում՝ նրա նոր աշխատանքները նայելու: Սկզբում երկար ու լուրջ-լուրջ քննարկեցին պատի տակ շարված գործերը, հետո սկսեցին խմել: Խմում էին ու բարձր-բարձր զրուցում, համարյա չէին ուտում. ասենք ուտելու առանձնապես բան էլ չկար: Եվ քանի որ հետաքրքրությունները նմանատիպ էին, զրույցը շատ հետաքրքիր էր՝ նկարչությունից, քաղաքի նոր կառույցներից, ձևավորման վարպետությունից: Աստիճանաբար, խմիչքի ազդեցության տակ թեմաներն ավելի բազմազան դարձան: Տղաներից մեկը երաժշտություն միացրեց: Ես ու Գրիգը սկսեցինք պարել: Եվ հաղորդվող ջերմությունից հանկարծ ամեն ինչ շատ պարզ ու հասկանալի դարձավ:

...Դրան հաջորդող օրերին Գրիգը շատ երջանիկ տեսք ուներ: Ինձ հետ իրեն պահում էր ազատ, չափազանց վստահ, կարծես ես արդեն իրենն եմ: Միջանցքներով անցնելիս գրկում էր, օրը մի քանի անգամ սենյակ մտնում, ամեն օր ինչ-որ տեղ հրավիրում, որից խուսափել հաջողվում էր երբեմն միայն: Իսկ ես նրա հետ անցկացրած ժամերին երջանիկ էի, բայց հետո տխրում էի՝ շատ լավ հասկանալով, որ այդպես երկար չի շարունակվի: Ես նրանը լինել չէի ուզում: Ավելի ճիշտ, գուցե սրտով ուզում էի, բայց ուղեղով՝ ոչ: Հավանաբար սիրտս այնքան չէր ուզում, որ ուղեղս անջատեր: Զգիտեմ...

Էդգարը գալիս էր համարյա ամեն օր: Մեր աշխատանքը սեպտեմբերին պետք է ներկայացնեինք հաստատման, ուրեմն կեսը պետք է արված լիներ: Աշխատում էինք շատ լարված: Մենք շատ ջերմ էինք իրար հանդեպ. ես գործընկերուհի էի, որի կարծիքը չէր անտեսվում, ես նաև զիջող էի ու մեղմ, որովհետև կողքինս մեծամտությամբ չէր տառապում ու բարի էր: Ինձ համար նա առանձնապես համակրելի չէր, բայց վերաբերմունքի ու պահվածքի հավասարակշռությունից դրական լիցքեր էին հաղորդվում: Եականն այն էր, որ ես նրա հետ չէի լարվում, չէի հոգնում: Ընդ որում, նրա մասին ես ոչինչ չգիտեի, որովհետև չէր սիրում իր մասին խոսել: Եթե անգամ շեղվում էինք աշխատանքից, խոսում էի միայն ես: Նա համբերատար լսում էր, թվում էր՝ հավերժ կարող է լսել: Եվ ես աստիճանաբար բացվում էի, ընդ որում աննկատ ու առանց վերապահումների:

Երբեմն աշխատանքից միասին էինք դուրս գալիս, մի քիչ քայլում էինք: Եվ արդեն խամրած արևը՝ իր պաղած ջերմությամբ մոռանալ էր տալիս օրվա հոգնությունը, տհաճ դեմքերի թողած տպավորությունը, խաղաղեցնում անհանգիստ հոգիս:

Ֆինանսական նեղությունից ընդունեցի բարեկամուհուս առաջարկը և համաձայնվեցի նրանց հարևանի՝ մի ժամանակակից հարուստի երեխաների հետ պարապել: Այր ու կին որոշել էին արձակուրդներն օգտագործել ու իրենց սերնդին գրագետ դարձնել: Պայմանավորվեցինք, որ շաբաթը երեք անգամ աշխատանքից հետո պետք է գնայի նրանց տուն: Աղջիկը պարտաճանաչ էր, սիրունիկ, մի քիչ էլ բութ, իսկ տղան անտանելի ծուլ, անգրագետ, բայց շատ համակրելի: Ամեն անգամ, երբ գնում էի, տղան դեռ բակում էր, և միայն տասնհինգ րոպե մոր ճվճվալուց հետո քրտնաթաթախ, կարմրատակած ու դժգոհ հայտնվում էր տանը: Այդ ընթացքում նրանց տնային տնտեսուհի մայրը փորձում էր ինձ սիրաշահել՝ իր տափակ զրույցներով, չնայած ես կնախընտրեի, որ հանգիստ թողներ: Ընդհանուր առմամբ նա վատը չէր, բայց այնքան տարբեր էր իմ տեսակից, որ խորթ էր: Տան մեջ մշտապես զուգված-զարդարված, հատ-հատ դարսած մազերով, քսնսված, տպավորությունն այնպիսին էր, որ մի քանի րոպեից հարսանիք է գնալու: Երեխաների հորը համարյա չէի տեսնում: Մի անգամ հայտնվեց՝ ծանոթանալու. ուռած փորով, անտաշ դեմքով, մանր աչքերով մի անդուր երևույթ: Թե ո՞ւմ համար էր այդ կինն այդքան զուգվում...

Ուրբաթ առավոտյան Գրիգն ուղղակի ներխուժեց մեր սենյակ ու իր մշտական մտերմիկ տոնով դիմեց.

-Դու կարո՞ղ ես շաբաթ-կիրակի աղջկադ մենակ թողնել:

-Ինչո՞ւ:

-Միասին մի տեղ գնանք:

Ես գիտեի, որ այս օրը գալու է:

-Չեմ կարող:

-Ինչո՞ւ,- անկեղծ զարմացավ,- աղջիկդ արդեն երեխա չի ու չեմ կարծում, թե կդժգոհի:

-Չեմ կարող: Այս անգամ չես համոզի:

Նա հանկարծ լրջացավ, քննող հայացքով նայեց երեսիս ու շատ ընդգծված հարցրեց.

-Չե՞ս կարծում, որ ժամանակն է մի քիչ միասին ու մենակ լինենք:

Ինձ համար շատ դժվար էր պատասխան գտնելը. բացարձակ անմիտ վիճակ, երբ հասկանում ես՝ ինչ է ասում, երբ գիտես՝ ինչ ես ասելու, բայց ուղղակի բառեր չկան, որ ասես:

-Ես կարծում եմ՝ ուրեմն արդեն ժամանակն է ընդհանրապես չհանդիպելու:

Նրա ապշած կերպարանքից հասկացա, որ շատ եմ հույսեր տվել... Հանկարծ ժպիտն իսպառ ցրվեց, ջահելությունը տեղի տվեց, դեմքը մռայլվեց.

-Ես ինչ-որ բան չեմ հասկանում: Կարծում էի դու... Դու ինձ համար շատ թանկ ես...,- նա լարվեց:

Կոկորդա սեղմում էր, երբեք չէի պատկերացնի, որ այսքան դժվար կլինեիր...

-Ինձ համար այս խոսակցությունը շատ ծանր է... Լսիր ինչ եմ ասում ու փորձիր հասկանալ, եթե գոնե մի քիչ ինձ հարգում ես: Դու շատ երիտասարդ ես, մեր քաղաքում լիքը ջահել ու սիրուն աղջիկներ կան... Ես քեզ կխանգարեմ... Ես 40 տարեկան եմ, 18 տարեկան աղջիկ ունեմ ու նաև իմ ապրելու ձևը... Դու ոչինչ չես կարող փոխել, հասկանում ես,- ես մի տեսակ անկապ էի խոսում:

-Սպասիր, բայց ես լուրջ...

-Վերջ, խնդրում եմ: Ես շատ հասում եմ ու կարող եմ երկուսիս փոխարեն էլ որոշել: Դու իմ տեսակը չես փոխի... Էլ չխոսենք:

Նա հավանաբար անսպասելիությունից շվարել էր: Ես նրա մազերը շոյեցի ու արագ դուրս եկա:

Միօրինակ կենցաղն իր ամենօրյա շրջապտույտի մեջ վերցրած պտտում է մեզ: Այդ միօրինակությունից ազատում չկա: Ճիշտ է, սովորաբար գարունը սկզբում խոստումներ է տալիս, արևի առաջին ճառագայթների հետ հույսեր ներշնչում, բայց իրար արագությամբ հաջորդող ժամերն այդ սպասումը կամաց-կամաց կտրտում են, ու դարձյալ մնում ես դու՝ քո ծանոթ օրերի հետ ընկերացած ու հարմարված:

Աղջիկս տխուր է, լուռ, հիմնականում ամբողջ օրը տանը: Պատրաստվում է քննությունների: Ինձ հետ նուրբ է, երևի շնորհակալ է, որ չեմ անհանգստացնում ավելորդ հարցերով: Երբեմն խոսում է հեռախոսով, որից հետո ավելի լարված է լինում: Ես շատ անհանգիստ եմ նրա համար: Ենթադրում եմ, որ ինչ-որ բան վճռել է և խորհրդի կարիք չունի, հակառակ դեպքում գուցե չէ՞ր խոսափի գրուցելուց: Ես փակվել եմ իմ մեջ: Հիմնարկում ինձ մեկուսի եմ պահում: Աշխատակիցների հետ շփվում եմ միայն

գործի բերումով: Գրիգի հետ այլևս չեն հանդիպում, երբեմն միջանցքներում մեկ-երկու բառ ենք փոխանակում: Նա մի տեսակ լրջացել է: Տղաները երբեմն կատակում են.

-Ինչո՞ւ ես նեղացրել մեր ջահելին, ոչ մեկիս հետ չի խոսում:

Ես միայն մի քիչ մեղավոր ժպտում եմ: Անկեղծ ասած, չէի էլ պատկերացնում, որ մեր հանդիպումներն այդքան լցնում էին իմ կյանքը: Հիմա մի անդուր դատարկություն կար...

Էդգարը գալիս է համարյա ամեն օր, բայց քանի որ ես լարված եմ, այդ աշխատանքն ինձ արդեն զայրացնում է: Նրա մշտական նույն տրամադրությունը և գործի հանդեպ ընդգծված բարեխղճությունն ահավոր նյարդայնացնում են: Գիտեմ, հասկանում եմ, որ ըստ էության այդ կայունությունը դրական բան է, իսկ աշխատանքի համար՝ անհրաժեշտ, բայց նշանակություն չունի, լրիվ անհասկանալի պատճառով՝ նեղվում եմ: Զգիտեմ՝ նա զգում է, թե չի զգում իմ տրամադրությունը, բայց բանի տեղ չի դնում: Մի անգամ միայն իմիջիայլոց հարցրեց՝ քեզ ի՞նչ է պատահել, անտրամադիր ես, բայց հավանաբար դժգոհ դեմքս տեսնելով՝ շրջանցեց:

Ես շատ լավ հասկանում եմ, որ նա մեղավոր է միայն այնքանով, որ կողքիս է: Եվ քանի որ ըստ էության միակ մարդն է, որի հետ շփվում եմ, դարձել է թիրախ իմ հիմար տրամադրության:

Ինչ-որ ճնշող մի բան կա ընդհանրապես: Առավոտյան ինչ վիճակում էլ արթնանաս, միևնույն է արագությանբ ամեն ինչ մռայլվում է: Անգամ արևի ամենակարող ճառագայթները չեն փրկում: Օրինակ, մեր բակում շշեր հանձնելու տեղ են բացել: Եվ ամեն առավոտ աշխատանքի գնալիս տխուր մի պատկեր ցցվում է աչքիդ առաջ. անասելի թշվառ, մարդկային կերպարանքները կորցրած մարդիկ շարված են... փողոցներից հավաքած շշերն են հանձնում: Մեր սերունդը դա չէր տեսել: Ու պատկերը ճնշում է, հոգիդ ցավեցնում: Գետնանցումի տակ էլի հոգնած դեմքերով մարդիկ են և տարբեր մեծության անհամար արկղեր, որոնցից սկըսվում է ամենօրյա առևտուրը: Քիչ անց այդ տարածքը, որ մի ժամանակ ընդամենն անցում էր, կվերածվի անհասկանալի, անկանոն ու խառնաշփոթ շուկայի...

Եվ նորից հասկանում ես, որ տանիցդ դուրս նոր կյանք է, նոր հարաբերություններ ու նոր բարքեր: Իսկ դու ապրելու այլ տարբերակ չունես, բացի հարմարվելուց: Եվ տխուր մտքերը գլուխ են բարձրացնում. տեսնես իմ երկիրը պարսկական քաղցրավենիք վաճառելով ու՞ր է հասնելու, երկրից փախչող ջահելներով ո՞նց է ազգային բանակ պահելու, սեփական փորձն ու

գործը մոռացած, աշխարհի փորձին ու գործին ընկած՝ մինչև ու՞ր է գնալու, ականջները պինդ փակելով ու ցավը տրորելով ինչքա՞ն է քայլելու... Իսկ ցավ կա: Ազգի մի մասի համար ցավի հետևանքը ծանր տնքոցն է, իսկ մնացածի համար ցավն աներևույթ է, հնարովի, իսկ ցավից տնքացողը կամ խղճուկ մի բան, կամ թշնամի: Իսկ ի՞նչ անես, եթե աչքերդ բաց են, բայց ոչ խղճուկ ես, ոչ թշնամի:

Գուցե ժամանա՞կ է պետք: Ժամանակն իր ամենագոր ձեռքով կհարթի, ամեն ինչ տեղը կդնի, արդարն ու մեղավորը կտարբերի: Ո՞վ կմտածեր, որ «գիտական կոմունիզմ» մշակող սերունդը եռագույնը կծածաներ...

Իմ ծննդյան օրն է: Առաջ ինձ համար դա տոն էր. ուզում էի բոլորը շնորհավորեն, հիմա այն ինձ բացարձակապես չի ուրախացնում: Հավանաբար երեսուներից հետո յուրաքանչյուր տասնամյակի սկիզբը ծանր է: Եվ իրոք, իբր ի՞նչ կա ուրախանալու. ըստ էության ամեն ինչ մնում է նույնը, իսկ տարիքդ ավելանում է՝ հետզհետե ընդգծվող կնճիռների հետ զուգահեռ: Գուցե դա առայժմ ոչ ոք չի տեսնում, բայց ես եմ տեսնում: Ժամանակ առ ժամանակ հայելու առաջ ինձ երկար ուսումնասիրում եմ ու հայտնաբերում: Երբեմն ինձ թվում է, որ եթե ամեն ինչ իմ կյանքում տեղը տեղին լիներ, օրինակ ես ամուսին ունենայի, երեք-չորս երեխա, ամռանը բաղրիջանի խավիար սարքեի, իսկ նոր տարուն՝ ճոխ սեղաններ, չէի նեղվի տարիքից: Դա կլիներ բնականոն ընթացքը կյանքի, որ հետո ենթադրում է թոռներ ու տատուքյուն: Բայց երբ ուսանողի գոյավիճակից ոչ մի կերպ դուրս չես գալիս, շատ հաճախ տարիքիցդ ուղղակի սարսափահար ես լինում:

ՕՖ, գուցե անմիտ մտքեր են. երևի բոլորն էլ դժվար են հարմարվում կնճիռներին:

Երեկոյան սպասում էի ընկերուհիներիս: Ջանգը ծլնգաց: Դուռը բաց արեցի ու ապշեցի, Էդգարն էր՝ ժպտադեմ, շքեղ ծաղիկներով:

-Բայց դու որտեղի՞ց գիտես,- չկարողացա զարմանքս թաքցնել:

-Մոռացե՞լ ես, որ մենք աշխատանքի համար տվյալներ ենք լրացրել:

Այնուամենայնիվ զարմանքս չափ չունեի: Նաև անկեղծորեն զգացված էի: Տրամադրությունս միանգամից բացվեց. պարզվում է՝ շատ քիչ բան է պետք... Հյուրերս շատ ուշ գնացին: Ես նստեցի բազմոցին, աղջիկս տեղավորվեց կողքիս, գլուխը դրեց ծնկներիս: Ու ես հասկացա, որ դատարկված եմ: Բայց հաճելի ու հագեցած դատարկություն էր դա, երբ վայելում ես բավականության տպավորությունը:

Շոգը վրա է տվել: Օրվա ընթացքում անտանելի տոթ է, իսկ երեկոները մի քիչ ավելի զով, բայց քամի ու փոշի: Քաղաքում օրեցօր ավելացող սրճաբանները կենդանացել են: Աղջիկս քննությունները հանձնեց, հիմա ամբողջ օրը տանն է՝ անտրամադիր ու անգործ: Պատրաստվում է գնալ ինչ-որ ուսանողական արշավի: Ես անհանգիստ եմ, բայց հակառակվել չեմ ուզում. գուցե կցրվի ու տրամադրությունը կփոխվի: Իմ պարապմունքները շարունակվում են, աշակերտներս հարազատ են դարձել: Նրանք ինձ սիրում են ու ենթարկվում: Աշխատանքի ժամերը, ինչպես միշտ, ծանր են անցնում: Զինա Էդգարը գալիս է շաբաթը երեք անգամ, որովհետև իր հիմնարկում զբաղված է: Մեր աշխատանքը դանդաղ է առաջ գնում, երկուսս էլ հոգնած ենք ու շատ ենք շեղվում: Երկար սուրճ ենք խմում, զրուցում ամեն ինչից, շոգի պատրվակով երբեմն շուտ ենք դուրս գալիս ու քայլում ենք:

Մի բան շատ պարզ է, որ իրար հետ լինելը հաճելի է: Ես նրա կարիքը զգում եմ, նրա հետ հաղորդակցվելու կարիքը զգում եմ: Նա շատ մեղմ է, հոգատար, բայց նաև ընդգծված զուսպ ու հավաք: Այնպես որ, մեծ ցանկության դեպքում էլ անհնար է նրա վերաբերմունքի մեջ ամենափոքր շեղում անգամ նկատելը: Սրտիս ինչ-որ մի անկյունում, թաքուն, շատ թաքուն անհանգստանում եմ իմ նկատելի կապվածության համար, բայց ամեն կերպ աշխատում եմ, որ այդ անհանգստությունն ինձ չանհանգստացնի:

Շուտով արձակուրդներ են:

Էդգարի հետ աշխատում էինք, երբ հեռախոսը զնգաց.

-Մամ, ես շատ վատ եմ,- աղջկաս ձայնը նվաղուն էր ու լացակունած:

-Ես գալիս եմ, - լրիվ ինձ կորցրած ճչացի:

-Ես մեքենայով եմ, հանգստացիր, - Էդգարի ձայնն ինձ ուշքի բերեց:

Զիվանդանոցում ասացին, որ կույր աղիք աս-վածն է, և անմիջապես պետք է վիրահատել: Աղջկաս վախեցած աչքերը տեսնելով՝ ես նորից ինձ կորցրեցի:

Վիրահատության ամբողջ ընթացքում ոչինչ չէի զգում, կարծես օդում լինեի, միայն զգում էի, որ ձեռքերս ահավոր սառել են: Էդգարն անընդհատ կողքիս էր, ինչ-որ հաբ տվեց, որ ես առանց հակառակվելու կուլ տվեցի, հետո ձեռքերս էր շփում: Վերջապես աղջկաս տեսա: Ծիշտ է քնած էր, մի քիչ էլ գունատ, բայց էլի շատ սիրուն: Ես սկսեցի հեկեկալ:

-Ես կարծում էի՝ դու ավելի ուժեղ ես, - ազդված իմ բացահայտ թուլությունից՝ Էդգարը փորձում էր մխիթարել,- ամեն ինչ անցավ, վաղն արդեն լավ կլինի, մի երկու օր հետո կքայլի: Ի՞նչ ես քեզ կոտորում:

Գիշերը մենք անցկացրինք միջանցքում: Նա տուն չգնաց: Ես երախտապարտ էի անչափ՝ շատ լավ հասկանալով, որ այդ պահին մենակությունը դաժան կլիներ:

-Առավոտյան, երբ աղջիկդ արթնանա, փորձիր մի քիչ քնել: Ես անհրաժեշտ ամեն ինչ կանեմ: Ու քեզ հավաք պահիր: Այդպես բաց նյարդերով ապրել չի կարելի: - Նա հանգիստ էր խոսում, երեխային խրատող տոնով, ուներս գրկած:

Ես այդ պահին անսահման սիրում էի նրան...

Երեք օր հետո մենք արդեն տանն էինք: Այդ ամբողջ ընթացքում Էդգարը համարյա միշտ մեզ հետ էր: Եվ զարմանալիորեն ես չէի էլ մտածում, թե ինչպես է նա կարողանում այդքան ժամանակ մեզ տրամադրել: Աղջիկս նրա հետ շատ ջերմ էր, ժպտում էր, երկար խոսում: Երևի ինքն էլ շնորհակալ էր:

Մեկ շաբաթ անց Էդգարը զգուշացրեց, որ մի 10-12 օր չենք հանդիպելու, որովհետև ընտանիքի հետ գնում է հանգստանալու: Դա իբր քիչ էր, աղջիկս էլ վճռական հայտարարեց, որ անկախ ամեն ինչից գնալու է արշավի:

-Բայց դու նոր ես վիրահատվել,- սարսափահար եղա ես:

-Մա, խնդրում եմ, աղաչում եմ, ես շատ զգույշ կլինեմ: Մենք գնում ենք յոթ օրից, այսինքն վիրահատությունից տասնյոթ օր հետո: Դու ամեն ինչ մի չափազանցրու: Ես բժշկիս հարցրել եմ, նա դեմ չէ:

Ինձ մնում էր անհանգստությունս, դժգոհությունս ու նեղսրտվածությունս կուլ տալ, նաև հարմարվել մի քանի օր մենակ մնալու գաղափարին:

Հիմնարկից շուտ եմ դուրս գալիս. Էդգարի բացակայությունը շատ եմ զգում: Արդեն հինգ օր է մենակ եմ: Տունը դատարկ է ու լուռ: Աղջկաս կարոտում եմ, նաև շատ անհանգիստ եմ:

Մենակություն ասվածը բազմաթիվ տարբերակներ ունի. մենակ ես, երբ քեզ չեն հասկանում, մենակ ես, երբ կողքիդ ոչ մեկը չունես, որ կարողանաս հենվել: Կարող ես մենակ լինել բազմության մեջ անգամ: Կարծում եմ, ցանկացած տարբերակով էլ մենությունը համարյա միշտ տխրություն է բերում: Եվ հավանաբար մի տարիք կա, երբ տխրության դեմ գրքերն անզոր են, հեռուստացույցը չի փրկում:

Հեռախոսը զնգաց, լսվեց Էդգարի ձայնը.

-Ես քաղաքում եմ: Որոշ բաներ եմ արել, եթե դեմ չես, մի քանի րոպեով հանդիպենք, դրանք քեզ տամ: Գուցե ժամանակ գտնես նայելու:

Սիրտս իրեն զգացնել տվեց ու կարծես ջերմությունս բարձրացավ...
Նա եկավ: Մենք խո սոււմ էինք աշխատանքի մասին, բայց դա ինձ բոլորովին չէր
հետաքրքրում: Ես նրան կարոտել էի:

-Սրա համար քաղաք եկար, թե՞ ուրիշ գործեր էլ ունեիր:

-Չէ, ոչ մի գործ էլ չկար: Մտածեցի գրածներս քեզ տալ, որ ժամանակ
չկորցնենք, - շատ բնական պատասխանեց նա, բայց հետո մի պահ լռեց ու
շատ ցածր, այնպես, որ լավ կլիներ չլսվեր, ավելացրեց, - ավելի շուտ եկա, որ
քեզ տեսնեն:

Նա ինձ չէր նայում, նայում էր ինչ-որ կետի, շատ լուրջ ու տխուր: Իսկ ես
տասնութ տարեկանի նման հրճվում էի:

-Աղջկանիցդ ի՞նչ լուր ունես,- փորձեց անհարմար լռությունը խախտել:

-Մի անգամ միայն զանգ է տվել, ասաց, որ իրեն շատ լավ է զգում, ամեն
ինչ հրաշալի է, որ ես չփորձեմ անհանգստանալ: Չայնը շատ առույգ էր ու
երջանիկ:

Մենք մի քանի բառ էլ փոխանակեցինք ու բաժանվեցինք՝ այլևս առանց
զեղումների:

Դրան հաջորդող օրերն անցան աննկատ: Ես չէի կարողանում, ասենք
չէի էլ փորձում բացատրություն գտնել իմ տրամադրության շեշտակի
փոփոխության համար: Երաժշտություն եմ լսել, ինձ համար նոր հագուստ եմ
գնել, աշակերտներիս հետ նրանց նկարներն եմ նայել, ընկերուհուս հետ
համերգ եմ գնացել, աղջկաս գալու առթիվ լիքը քաղցրավենիք եմ գնել: Մի
բան պարզ էր, նա, որին ես տեսնում էի շաբաթը երեք անգամ ընդամենը,
հիմնավոր մտել էր կյանքիս մեջ: Ես սկսել էի շատ մտածել նրա մասին: Նման
անհասկանալի զգացում չեմ ունեցել: Ես կարծես սիրահարված չէի, բայց նա
աննկատ, աստիճանաբար մտավ կյանքիս ու մտքերիս մեջ: Չհասկացա, թե
ո՞նց խցկվեց ներս... ուղղակի հանկարծ զգացի, որ ինչ անում եմ, ինչ խոսում
եմ, ինչ մտածում եմ՝ ուղեղիս մի անկյունում նա միշտ կա, սևեռուն գաղափարի
նման, ցավոտ հիվանդության պես:

Երբեմն փորձում եմ անուն տալ այս ամենին, բացատրություն գտնել,
արդարացնել կամ մեղադրել ինձ, վերջապես հասկանալ ինձ, բայց բացարձակ
ոչինչ չի ստացվում: Ես չեմ հասկանում ինձ: Չեմ հասկանում, որովհետև
կյանքում առաջին անգամ չեմ ուզում շատ քչփորել... Կամ էլ վախենում եմ:
Վախենում եմ, որ կարող է ինչ-որ բան ինքս ինձ խոստովանեմ, որովհետև
բավական է, որ ես ինձ խոստովանեմ այն, ինչ արդեն գիտեմ, կհայտնվեմ
դժոխքում: Ինքս ինձ համար սարքած դժոխքում, որտեղ պետք է

պատասխանեն անհամար հարցերի: Հարցեր, որոնց դժվար թե որևէ մեկը կարողանա պատասխանել ընդհանրապես:

Վերադառնալուց հետո աղջիկս շատ փոխված է: Նախ՝ ուրախ է, թարմացած, ժպտերես, նոր բացված ծաղիկի նման, որ ժպտուն աչիկներով բարևում է արևին, հետո հաճելի ճկվում ու ձգվում: Բացի այդ՝ քիչ է տանը մնում: Իսկ երբ տանն է, անդադար քթի տակ երգում է, ամեն անգամ կողքովս անցնելիս ինձ գրկում ու պաչպչում, երկար, մի քիչ էլ կոտրատվելով՝ խոսում հեռախոսով:

Ես թաքուն հրճվում եմ նրանով ու փորձում հասկանալ այդ կտրուկ փոփոխության պատճառը: Իրենց արշավի մասին իմ տված հիսուն հարցերից ես ստացա հինգի հակիրճ պատասխանը միայն, և ենթադրեցի, որ շատ լավ ժամանակ են անցկացրել:

Ամառն իր տարերքի մեջ է՝ շոգ- կրակ:

-Չե՞ս ուզում աղջկադ հետ մի տասը օրով որևէ տեղ գնալ,- երևի իմ հոգնած կերպարանքից ազդված հարցրեց Էդգարը: - Ես ամեն ինչի մասին կհոգամ, ձեզ համար ուղեգիր կվերցնեն, ես էլ կտանեմ ու կբերեմ:

Չգիտեմ ինչու, բայց լացս գալիս էր: Շատ վաղուց ինձ հետ ոչ ոք նման ձևով չէր խոսել, մի տեսակ հարազատի, հոր... Կոկորդս սեղմում էր, ու ես ծպտուն չհանեցի:

-Մտածեք ու ինձ պատասխանեք, լա՞վ,- հավանաբար ենթադրելով, որ չեմ կողմնորոշվում, ասաց ու գլուխը կախեց թղթերի վրա:

Երկու օր հետո ես արձակուրդ վերցրեցի: Երբ ինձամից գոհ տանը հայտարարեցի, որ երեք օրից գնում եմք հանգստանալու, աղջիկս դժգոհ ու դժբախտ տեսք ընդունեց.

-Երկա՞ր ենք մնալու:

-Ինչքան ուզենք: Ի՞նչը քեզ դուր չեկավ: Ես ահավոր հոգնած եմ: Ինձ գոցե մի քանի օր հանգստանալ է պետք:

-Չէ, չէ, ես դեմ չեմ, բայց երկար չմնանք, լա՞վ:

Պարզ է՝ ինչ-որ մի բան կա: Ավելի լավ, ես էլ երկար ժամանակով չէի ուզում, ուրեմն թող լինի մեկ շաբաթ:

Փոքր, գեղեցիկ հանգստյան տուն էր: Նախկին փայլը մի քիչ խամրած, բայց հիմնականում պահպանված, երեք հարկանի շենք էր, անտառի մեջ, հին ու հսկա բարդիներով շրջապատված, գեղեցիկ պատշգամբներով:

Հանգստացողները քիչ են և բնականաբար անգործ: Նախաճաշում են,

բակում լուրջ-լուրջ քայլում ու գրուցում, ճաշում են, որոշ ժամանակ փակվում սենյակներում, հետո ընթրում ու նորից լուրջ-լուրջ ճեմում:

Մենք այդ ընդհանուր գրաֆիկից շեղված ենք, որովհետև ես անընդհատ քնել եմ ուզում: Գիրքը ձևի համար վերցնում եմ ձեռքս ու պառկում, բայց ոչ քնում եմ, ոչ կարդում: Մտքերս էլ խառն են ու անբացատրելի: Ու փաստորեն, ի զարմանս ինձ, ոչինչ չանել ստացվում է: Երևի իրոք հոգնած եմ: Այդպես հինգ օր շարունակ պառկած նայեցի առաստաղին, իսկ աղջիկս լրիվ սիրահարվածի կեցվածքով, գիրքը ծնկներին՝ երազում էր: Մեզ խեթ-խեթ են նայում, փաստորեն ոչ մեկի հետ չենք շփվում, ճաշում ու վազում սենյակ:

Հինգ օր հետո բնական է ձանձրացանք և հենց առաջին քայլելու փորձից անմիջապես ծանոթացանք վաղուց մտերմացած կանանց մի խմբի հետ: Ես հասկացա, թե ո՞ւր են գնում ճաշից հետո՝ սուրճ խմելու: Եվ ինչպես շատ շուտով պարզվեց, այդ խմբից այլևս անջատվել անհնար էր: Նրանք՝ բոլորը միասին, կամ առանձին-առանձին, խոսքերը մեկ արած, օրուարև չտվեցին մեզ՝ իրենց խիստ յուրօրինակ գրույցներով:

Առհասարակ շատ հետաքրքիր են կանայք: Նրանք կարող են երկու օրվա մեջ այնպես մտերմանալ կամ էլ պատկերացնել, թե մտերիմ են, որ հնարավոր դառնա իրենց ամբողջ կյանքը պատմել, ամենայն, ուղեղիդ մեջ չտեղավորվող մանրամասներով:

Եվ այսպես, հանգստյան տանը անցկացրած վերջին երկու օրում ես իմացա, որ այդ կանայք միաբերան ատում էին իրենց սկեսուրներին, ձեռնպահ էր միայն մեկը, որի սկեսուրը մահացած էր: Պարզվեց նաև, որ այդ կանանցից երեքի ամուսինները վաղուց «ինչ-որ մեկին» ունեին, բայց իրենք խելամտորեն ձևացնում էին, որ չգիտեն, իսկ նրանցից մեկը, քանի որ «արժանապատվություն ուներ», իր՝ սիրուհի պահող ամուսնուն պատասխանում էր նույն կերպ: Բոլորը հավատացնում էին, որ երեխաների հոգսը միայն իրենցն է, իսկ էգոիստ կողակիցները չեն խառնվում երեխաների դաստիարակության գործին, և այս ու նմանատիպ քննարկումներն անվերջ էին:

Ես ճիշտն ասած անասելի զարմացած եմ նմանօրինակ ցանցառությունից, երբ ընդամենը մի քանի օրվա ծանոթի կարելի է պատմել կյանքդ՝ լավ իմանալով, որ մի երկու օրից բաժանվելու ես և, ամենայն հավանականությամբ, էլ երբեք չես հանդիպելու: Աղջիկս այդ շատախոսությունից ընդհանրապես ապշած էր, նա պետք եղած տեղը չի խոսում, բայց, ինչպես երևում է, այդ աշխուժությունն ավելի սրտովն էր, քան նախորդ օրերի մեռյալ վիճակը:

Իսկ վերջին օրն արդեն մենք երկուսս էլ անհամբեր սպասում էինք
եղգարին:

Արդեն սեպտեմբերն է: Կյանքը մտել է իր բնականոն հունի մեջ:
Հիմնարկում ամեն ինչ նույնն է. նույն տաղտուկը, գործի հանդեպ նույն
անտարբերությունը, նույն համատարած ու ճնշող չկամությունը: Ես էլ եմ
դարձել անտարբեր, ոչինչ չեմ նախաձեռնում, անում եմ միայն այն, ինչ
հանձնարարվում է: Լուրջ աշխատում եմ միայն եղգարի հետ: Մեր
աշխատանքն արդեն ավարտման փուլում է, և սկսվել է նաև նախարարության
հետ քաջքշուկը՝ հաստատելու ու հրատարակելու համար: Անդադար ինչ-որ
թղթեր ենք լրացնում, փորձում ինչ-որ բաներ ապացուցել, որ իրականում
ապացուցելու բնավ կարիք չունեն, փորձում ենք հաղթահարել ինչ-ինչ
արհեստական արգելքներ՝ միջանցքների ոլորապտույտ ճանապարհներին թե
համակրելի, թե տհաճ դեմքերի հանդիպելով: Եվ այդ ամբողջ անհմաստ
տարուբերումներից հասկանում ես միայն, որ մարդկային վերաբերմունքն
այնքան հազվադեպ ու փնտրված է դարձել, որ անմիջապես երախտա-
գիտության զգացում է առաջացնում, իսկ անճոռնի պահվածքը դարձել է
սովորական ու ընդունված, չնայած միևնույն է զայրացնում է:

Մեր հարաբերություններն եղգարի հետ շատ գործնական են, բայց
ինչպես միշտ՝ ջերմ ու փոխադարձ հոգատար: Աշխատանքից դուրս մենք չենք
հանդիպում, համարյա թե ուրիշ ոչ մի թեմայով չենք զրուցում, պարզապես
ժամանակը չի բավարարում:

Աղջիկս անճանաչելի փոխված է: Առավոտյան, մինչև դասի գնալը,
երկար կանգնում է հայելու առաջ, դասերից հետո համարյա ամեն օր ուշանում
է, բոլոր հարցերիս խուսափողական պատասխան տալիս: Ու մի օր էլ արդեն
չդիմացա, համբերությունս հատեց ու պայթեցի:

-Դու որոշել ես համառորեն ինձ հետ չխոսե՞լ:

Նա իմ կտրուկ ու զայրացած տոնից հանկարծակիի եկավ, քննող
հայացքով նայեց երեսիս, կարծես փորձելով կռահել, թե ի՞նչ արձագանք
կունենա ասածը և դժվարությամբ, բայց հանդիսավոր հայտարարեց.

-Մա, ես մեկի հետ հանդիպում եմ:

Դա վաղուց կարելի էր ենթադրել:

-Ես պետք է էլի հարցեր տամ, թե՞ դու այնուամենայնիվ որոշ բաներ
կպատմես:

-Մենք ծանոթացել ենք արշավի ժամանակ: Ուսանող է, այս տարի ավարտում է: Էլ ի՞նչ ասեն... ինձ շատ դուր է գալիս, լավ նվագում է, նրա հետ շատ հետաքրքիր է, - աղջիկս մի քիչ մոլորված տեսք ունեւր:- Ասում է, որ ինձ... դէ, հասկանում ես... ՕՖ, ի՞նչ ասեն: Ուզում ե՞ս տեսնել:

Չգիտեն: Ուզում են կամ չեն ուզում, դա՞ է կարևորը: Սիրտս ահավոր նեղվեց, ինձ թվաց՝ շունչս կտրվում է: Հիմա էլ ես մոլորվեցի: Նա հարցական նայում էր երեսիս: Իբր ուզում էի ամեն ինչ իմանալ, հիմա ի՞նչ ասեն:

-Չգիտեն:

-Մա, բայց ինչի՞ տխրեցիր: Ես ինձ շատ լավ եմ զգում:

Աղջիկս մոտեցավ ինձ, գրկեց ու սկսեց ծիծաղել, հետո փորձեց նաև մխիթարել:

-Ես արդեն երեխա չեմ, դու մի անհանգստացիր: Գիտեն, թէ ինչ կուզես ասել, որ զգույշ ու հասկացող լինեն: Խոստանում եմ: Իսկ եթէ ուզում ես նաև իմ կարծիքն իմանալ, դու պետք է ուրախ լինես, որ ես հիմա երջանիկ եմ:

Ընտիր է ասված. «հիմա երջանիկ եմ»: Բայց էս անտեր կյանքը տարօրինակ մի բան է, և շատ հաճախ «հիմա» արած քայլերիդ համար ստիպված ես լինում ամբողջ կյանքում պատասխան տալ հետո:

-Լավ: Ես ուրախ եմ քեզ համար, - խեղճ-խեղճ ասացի՝ բնավ չցանկանալով նրան հոգս պատճառել,- բայց խոստացիր, որ եթէ հանկարծ ինչ-որ բան այնպես չլինի, չես տառապելու:

-Լավ, խոստանում եմ: Դու էլ խոստացիր, որ չես տառապի և հարցերով էլ ինձ չես տանջի: Ամեն ինչ լավ կլինի, մա:

Ես միայն տարակուսանքով նրան նայեցի՝ ո՞վ գիտի....

Նախարարությունից հրավիրեցին սեմինարի, որը իբր կապված էր նաև մեր աշխատանքի հետ: Մենք որոշեցինք գնալ: Սեմինարը կազմակերպել էին քաղաքից դուրս, կեսօրին: Էդգարը մեքենայով էր: Մենք դուրս եկանք բավական շուտ, որ հասցնենք նաև ճանապարհին նախաճաշել:

Իսկական աշնանային եղանակ էր, երկինքը թխպոտ, մռայլ, ամեն վայրկյան թվում էր՝ հիմա անձրևը կթափվի: Բայց այդ անտանելի երկինքը չէր ազդում մեր տրամադրության վրա: Մենք խաղաղ էինք ու չէինք տրտնջում: Իմ ողջ էությունը մի հաճելի թնրությամբ էր պարուրված, երբ բոլորովին չես տեսնում քեզ շրջապատող աշխարհը: Ավելի ճիշտ՝ այդ աշխարհում տեսնում ես միայն մեկին: Իսկ այդ մեկը կողքիս էր, իր մշտական հանգստությամբ, հաստ բաճկոնի մեջ կոլովված, սիրելի ու շատ հարազատ:

ճանապարհին կանգնեցինք: Արտաքուստ անշուք ու անճաշակ տեղ էր՝ փոքր ճաշարան հիշեցնող, բայց քանի որ ընտրելու տարբերակ չունեինք, ներս մտանք: Ներսում դատարկ էր, մաքուր ու հարմարավետ. դա մեզ մխիթարեց: Մենք առանց շտապելու ու հաճույքով նախաճաշեցինք:

-Ինձ թվում է՝ ելույթները ձանձրալի են լինելու:

Ճիշտն ասած ինձ համար միևնույն էր, ես չարձագանքեցի:

-Եթե տեսնենք անտանելի է, դուրս կգանք մի քիչ կթափառենք,- շարունակեց նա:

-Ըհը:

-Ես այսօր ինչ-որ լավ չեմ հասկանում քո տրամադրությունը: Ասեմ՝ տխուր ես, տխուր չեմ, զարմանալի լուռ ես: Գուցե բացատրես, ես հասկանամ ինձ ո՞նց պահեմ:

-Ոնց ուզում ես, ես շատ լավ եմ ինձ զգում: Ես վայելում եմ:

-Ի՞նչը:

-Օրը, - մի քիչ ալարկոտ պատասխանեցի ես ու մտքումս շարունակեցի՝ քո ներկայությունը:

Նա թերահավատ ու քննող հայացքով ինձ նայեց ու չշարունակեց:

Հասանք ճիշտ ժամանակին: Նորակառույց, տարօրինակ շինություն էր՝ հյուրանոցի նման, շքեղ ու հավակնոտ: Բավական շատ ժողովուրդ էր հավաքվել: Բոլորը մի տեսակ տոնական տեսք ունեին, հագած-կապած, չնայած ձևի համար միաբերան դժգոհում էին եղանակից: Դահլիճում նախարարության աշխատակիցները մեզ անմիջապես նկատեցին ու հրավիրեցին իրենց մոտ նստելու: Նիստը սկսվեց. բոլորը լռեցին: Ինչպես որ սպասվում էր, բացման խոսքը անհարկի երկար էր, բավականին տափակ, իսկ վերջում ուղղակի անտանելի:

Այ քեզ բան, պարզվում է, երբ տրամադրությունդ բարձր է, անգամ բացահայտ ապուշությունները կարող են նյարդերդ չքայքայել: Ես դա երբեք չեմ պատկերացրել: Եվ գյուտ արածի նման՝ վայելում էի իմ զարմանալի անտարբերությունը:

Երբ հերթական գեկուցողը սկսեց նույն ոճով և միայն տասնհինգ րոպե հետո անցավ բուն նյութին, Էդգարը չդիմացավ.

-Դուրս գանք, ես այստեղ չեմ եկել էս ապուշությունները լսելու:

-Իսկ հետաքրքիր է ինչո՞ւ ենք եկել,- ես նրան այդքան նեղված չէի տեսել:

Նա խեթ-խեթ ու դժգոհ նայեց ինձ, ձեռքս բռնեց ու դուրս տարավ:

-Ասում են մի երկու-երեք հետաքրքիր զեկուցում կա, երևի մի ժամից: Չիմա գնանք մի քիչ թափառենք:

Ես ենթարկվեցի, չնայած այդպիսի եղանակի՝ դրսում թափառելն առանձնապես չէր գրավում:

Դրսում անձրևն արդեն մաղում էր: Շուրջը մի տեսակ հեքիաթային գեղեցկություն էր: Ամենուր թափված գույնզգույն տերևները նման էին թաց ու գունավոր գորգի: Եղանակն ասես պարտադրում էր չխոսել, ու մենք երկար ժամանակ մենք լուռ քայլում էինք:

-Գիտե՞ս՝ աղջիկս սիրահարված է: Ինձ առանձնապես ոչինչ չի ասում, բայց ինչքան հասկանում եմ՝ շատ երջանիկ է: Իսկ ես ի՞նչ անելու չգիտեմ:

-Մի խանգարիր, - միանգամից վրա տվեց, կարծես վաղուց էր սպասում այդ խոսակցությանը: - Կողքից նայիր ու մի խանգարիր: Դու լավ գիտես, որ ամբողջության մեջ կյանքը երջանիկ լինել չի կարող: Լինում են միայն երջանիկ ժամեր, որոնցով էլ ի վերջո ճշտվում է կյանքի ինչ լինելը: Թող հիմա վայելի իր երջանկությունը: Դու երևի մտածում ես՝ իսկ հետո՞... Դու ես միշտ ասում՝ հետոյի տերն էլ՝ Աստված: Ասելու համար ես ասում, թե իրո՞ք այդպես ես մտածում: Հասկանու՞մ ես, նա դեռ ջահել է, իր հետոն ունի: Այ, մենք՝ ուրիշ... Մեր հետոն ներկան է: Էլ հետո չկա, որովհետև մեր հետոն ծերությունն է:

-Զգու՞մ ես, որ փիլիսոփայում ես:

-Բոլորովին էլ ոչ: Ես ուղղակի սկսել եմ հասկանալ, որ ամեն մարդ երջանիկ լինելու իրավունք ունի, և եթե այդքանը հասկանում ենք, ինչո՞ւ կյանքից շատ հաճախ մերը վերցնելիս գլուխ ենք կոտրում, թե հետո ի՞նչ կլինի, - նա ասես ինքն իր հետ էր խոսում՝ նյարդային ու ինձ չնայելով, - պարտականությունները քարշ տալով՝ մենք անընդհատ մեզ մոռանում ենք: Գիտե՞ս հիմա ինչ հարց եմ ինձ տալիս՝ իսկ ինչո՞ւ ոչ. դու հիմա կողքիս ես, վերջ... էլ ի՞նչ հետո:

Ես և հասկանում էի, և չէի հասկանում նրան: Երևի մենք երկուսով արդեն մի սահմանագծում ենք, երբ ահավոր վախենում ենք սխալվելուց, բայց հասկանում ենք, որ չսխալվել չենք կարող: Իսկ եթե փորձում ես հատել սխալվել-չսխալվելու սահմանագիծը հիմնավորապես խճճվում ես: Այլևս ոչինչ չես հասկանում: Այսինքն ինչո՞ւ չէ, հասկանում ես, ավելին ես հասկանում: Բայց դրանից հետո բոլոր հարցերը, որ տալիս ես ինքդ քեզ, արդեն ունեն երկու՝ լրիվ իրար հակասող պատասխաններ: Եվ զարմանալին այն է, որ հարցերը ոնց էլ պտտում ես, երկու պատասխաններն էլ ճիշտ են դուրս գալիս: Ուրեմն ի՞նչ է ստացվում. արդյո՞ք դա նշանակում է, որ դու իրավունք ունես ընտրել այն պատասխանը, որն արդարացնում ու պաշտպանում է քեզ:

Մենք թևանցուկ ու լուռ քայլում էինք մեղմ ու տաք անձրևի տակ՝ հավանաբար մտովի փորձելով ինչ-որ բան այնուամենայնիվ հասկանալ: ...Վերադարձանք դահլիճ՝ լրիվ թրջված ու դատարկված:

Ընդմիջմանը հրավիրեցին ճաշի: Բոլորը երկար ու հաճույքով ճաշեցին, հետո սուրճ խմեցին: Երկրորդ մասի զեկուցումները համեմատաբար հետաքրքիր էին և կոնկրետ, ժամանակն արդեն քիչ էր, և բոլորն աշխատում էին խոսել ըստ էության: Նիստն ավարտվեց, երբ արդեն մթնում էր:

Մենք ծանոթներին ջերմ հրաժեշտ տվեցինք ու նստեցինք մեքենա:

-Մենք քաղաք չենք գնում,- կտրուկ, բայց հանգիստ հայտարարեց նա:

Ես չէի կարողանում ինձ ստիպել ու հարցնել, թե ու՞ր ենք գնում: Հասանք ինչ-որ տեղ. արդեն լրիվ մութ էր: Հետո միայն տեսա, որ շքեղ հանգստյան տուն էր: Էդգարը խնդրեց սպասել մեքենայի մեջ ու դուրս եկավ: Ես, որ ամբողջ ճանապարհին լուռ էի, շարունակում էի լռել: Ի՞նչ էր կատարվում ինձ հետ՝ չէի հասկանում: Հավանաբար ամբողջովին ենթարկվում էի սրտիս:

Նա եկավ, ես դուրս եկա մեքենայից, մենք մտանք շենք, հետո սենյակ... Ես զգում էի միայն, որ հանձնվում եմ: Հանձնվում եմ մի տղամարդու, որը իմը չէր, իմը չէր լինելու... բայց ես համառորեն չէի կարողանում և հավանաբար նաև չէի ուզում մտածել այդ մասին:

- Իմ մեջ հիմա ամեն ինչ խառնված է, - նա շատ հանգիստ էր խոսում:- Դու հիմա կարող ես հարցեր տալ, որոնց պատասխանները ես չգիտեմ: Գիտեմ միայն, որ ուզում եմ դու իմը լինես: Իմը լինես՝ քանի ես կամ էս աշխարհում:

Մեջս ինչ-որ բան ընդվզեց, ցավեցրեց... բայց անմիջապես էլ հալվեց՝ հպումի ջերմությունից ու քնքշությունից, ինձ գրկող ուժից ու վճռականությունից:

...Իսկ դրսում աշման անձրևն էր: